

ԾԻՍԱԿԱՆ ԿԱՐԳԵՐԸ

ՀԱՅՈՑ ՄԷՋ

Ըստ Հ. Սպենսերի.

Ս. Լալայեանի

ԶՈՐՐՈՐԴԻ ԳԼՈՒԽ*)

Ը Ն Ծ Ա Ն Ե Ր.

Ի.— Զանապարհորդներն օտար ժողովուրդներէ հետ յարաբերութիւն ունենալիս սովորութիւն ունին նրանց հաճութիւնը գրաւել ընծաներ տալով: Այս վարմունքը ունենում է երկու հետեանք. նախ՝ նուիրած իրի արժէքի պատճառած հաճոյքը բարեկամական տրամադրութիւն է յառաջացնում օտարականի մէջ և երկրորդ՝ ընծայաբերութեան գործողութիւնը նուիրատուի կողմից լռելեայն ցանկութիւն է արտայայտում դուր գալու, որը նաև տրամադրում է նուիրառութիւն՝ դէպի նուիրատուն: Այս վերջին ցանկութեան մէջ պէտք է որոնել ընծայաբերութեան, որպէս ծիսական կարգի, սկիզբը:

Մայրատման ու ընծայաբերութեան, այսինքն մարմնի մի որևէ մասի և մի որևէ իրի մատուցման միջև եղած կապը պարզ երևում է Գարսիլասոսի մի պատմուածքի մէջ, ուր ցոյց է տրւում, որ ընծայաբերութիւնը դառնում է հաշտարար, զթարար միջոց, ընծայուած իրի արժէքից բոլորովին անկախ: Գարսիլասոսն նկարագրելով բեռնակիրների կեանքը, ասում է, թէ սրանք լիբան բարձունքին հասած միջոցին վայր են դնում իրենց բեռները և արտասանում են իրենց Պաշակամակ աստծուն ուղղուած հետեանալ խօսքերը. «Շնորհակալեմ քեզանից, որ կարողացայ կրել այս իրերը մինչև այստեղ»: Յետոյ, իբր զոհ, քաշում են իրենց ունքերից մի մի մազ և կամ հանում են բերնից կիւկա կոչուած խոտը, իբր նուէր իրենց ունեցած ամենաթանգագին իրերից: Եւ կամ, եթէ աւելի լաւ բան չեն ունենում զոհաբերելու, մատուցանում են

*) Տես Ազգագրական Հանդէս XXII գիրք:

ծղօտի կամ քարի կտոր և կամ հողի կոշտ: Լեռնային անցքերի զազաթներին յաճախ պատահում են ահագին կոյտեր՝ բաղկացած այսպիսի զոհաբերութիւններից:

Միևնոյն երևոյթը տեղի է ունենում նաև հայերիս մէջ, այսպէս, օրինակ, ճանապարհների վրայ, անընակ տեղերում ընկած սրբերի ուխտատեղիների մօտով անցնելիս՝ ճանապարհորդները չունենալով յարմարութիւն խուճկ ու մօմ զոհաբերելու, մի կտոր քար են ձգում այդպիսի սրբատեղու վրայ, որով կատարուած են համարում իրենց զոհաբերութեան պարտականութիւնը:

Որքան և մարմնի մասերի կամ թանգագին իրերի և կամ ոչ մի արժէք չներկայացնող իրերի զոհաբերութիւնը, առաջին երևոյթից, տարօրինակ թուի մեզ, բայց և այնպէս՝ նրանց տարօրինակութիւնը չափազանց կը նուազի, եթէ մտաբերենք, որ Ֆրանսիայում, ճանապարհների երկու կողմը բարձրացող խաչքարերի պատուանդանների վրայ կարելի է տեսնել երկու բարակ փայտերից շինուած խաչերի կոյտեր: Այս խաչերի արժէքն երբէք չի գերակշռել այն ծղօտի, ձողիկների և քարերի արժէքին, որ մատուցանում են պերուցիները և սրանք, վերոյիշեալ ընծաների նման, ցոյց են տալիս այն ճշմարտութիւնը, որ ընծայաբերութիւնը զառնում է միևնի շնորհը, գութը գրաւելու ցանկութիւն արտայայտող մի ծէս:

Հայկական մի աւանդութիւն պատմում է, թէ երկու ուղտ միասին արածելիս՝ երբ արդէն կշտացած են եղել, սրանցից մինը մի փուշ է քաղել և միւսի բերանը դրել, և երբ վերջինս հարցրել է թէ ի՞նչ ես անում, չէ՞ որ սա ևս այն փուշն է, որից կերանք կշտացանք, սուտողը պատասխանել է՝ Փուշ՝ միշտ փուշա, ամա մարիֆաթն (այսինքն շնորհք, յարգանք ցոյց տալն) անուշ ա:

Թէ ինչ աստիճանի բնական է իսկական ընծան անուանականով փոխարինել այնտեղ, ուր իսկականը չի կարող տեղի ունենալ, տեսնում ենք մի քանի խելահաս կենդանիների մէջ: Որսորդական շունը, որ սովորել է հաճոյանալ տիրոջը՝ բերելով նրան նրա սպանած թռչունները, սովորութիւն է դարձնում տանել նրան և՛ այլ առարկաներ, երբ ցանկանում է արտայայտել իւր ցանկութիւնը նրան դուր գալու: Նրը շունը առաւօտը, առաջին անգամ պատահում է իւր սիրած անձին, չի բաւականանում միայն ընդ առաջ վազել նրան իւր սովորական ուրախութեան արտայայտութիւնով, այլ նաև գնում, որոնում և բերում է բերնում բռնած մի թառամած տերև, ծառի մի ճիւղ կամ մի այլ իր, որ կարողանում է գտնել մօտակայքում: Մեր առաջ բերած օրինակը այս գթարար ծիսի բնական ծագումը ցոյց տալուց

զատ՝ ապացուցանում է նաև, թէ զարգացման որչափ ստոր աստիճանի վրայ է սկսւում սիմվոլիզացիայի գործողութիւնը և թէ ինչպէս հէնց սկզբից սիմվոլիզմը մի կրկնութիւն է սիմվոլական գործողութեան՝ նոյնքան ճիշտ, որքան հանգամանքները թոյլ են տալիս:

Այսպէս ուրեմն՝ մենք հետեւեցինք այն է վոլիցիային, որ ընծաներ մատուցանելուց յառաջանում է ձիսական կարգ. այժմ գիտենք այս ձիսի զանազանակերպութիւնները և այն հասարակական երևոյթները, որոնք սրանից ծագում են:

ԻԱ. — Ընծայարեւութիւնը, որպէս ընդունուած ծէս, գոյութիւն չունի ոչ կառավարութիւն չունեցող ժողովրդների մէջ, և ոչ էլ նրանց, որոնք թէև ունեն կառավարութիւն, սակայն շատ թոյլ իշխանութիւնաւ:

Աւստրալիացիները, տասմանցիները և Հիոյ երկրի բնակիչները այս դէպքում ներկայացնում են ամենալաւ ապացոյցները: Իսկ կարգալով ճանապարհորդների նկարագրութիւնները Ամերիկայի վայրենի ժողովուրդների մասին, որոնք շատ թոյլ կերպով են կազմակերպուած, ինչպէս էսկիմոսները, չիւուկները, օձերը, կոմանչիները, չիպպէու-օզները, կամ դեմոկրատական կազմակերպութիւն ստացածները, ինչպէս, օրինակ, իրոկէզները և կրիկները, տեսնում ենք, որ ուր բացակայում է անձնական զօրեղ իշխանութիւնը, այնտեղ շատ հազիւ է յիշուում ընծայարեւութեան մասին, որպէս մի քաղաքական ծէսի:

Միանգամայն սրա հակառակն են ներկայացնում Ամերիկայի այն ժողովուրդների սովորութիւնները, որոնք շատ հին ժամանակից սկսած, բռնակալ կառավարութիւնաւ հասել են բաւական բարձր քաղաքակրթութեան:

Մեքսիկայում երբ գալիս են ողջունելու տիրոջը, Թազաուորին, ծաղիկներ և ընծաներ են բերում, ինչպէս վկայում է Տորքըմատան: Զիրչասների մէջ շերտ մինը ընծաներ է տանում, որպէս զի որևէ գործի մասին խօսի կամ տեսնի կասկիին (որովհետև ոչ ոք չի կարող այցելել նրան առանց ընծայ մատուցանելու), ներս է մտնում՝ գլուխը և ամբողջ մարմինը սաստիկ խոնարհած: Հին իսկատանցիներն որսորդութիւն անելիս, կամ ձուկ որսալիս և կամ աղ հանելիս միշտ բաժին էին հանում իրենց զօրապետին:

Միևնոյն սովորութիւնը տեղի ունի նաև հայերի մէջ. — Հայ գիւղացին առանց ընծայի երբէք չի գնալ մի մեծաւորի տեսնելու: Նոյնիսկ «տեսնել» բառը լընծայ տալու է իմաստն է ստացել: Միևնոյն սովորութիւնը տեսնում ենք և այլ տիպի ժողովրդների մէջ, ինչպիսի են Մալայո—Պոլինեզիայի ժողովրդները,

որոնք գտնւում են վերոյիշեալ ժողովրդների հասարակական կազմակերպութեան միևնոյն աստիճանի վրայ, և ենթարկւում են զօրապետների անսահման իշխանութեան: Ֆոստերը ցուցակագրելով այն իրերը, որ սրանց ստորին դասակարգը փոխանակում էր տայիտացիների հետ ուտելիղէններով և տեղական զործուածքներով, ասում է. Մսկայն մենք նկատել ենք, որ մի կարճ միջոցից յետոյ, այս ձեռք բերած ամբողջ հարստութիւնը անցնում է կամ իբր ընծայ, և կամ իբր շնորհակալութեան նշան զանազան զօրապետների զանձարաններին: Միևնոյնը և Ֆիտշում, Ռով ցանկանում է մի շնորհ խնդրել զօրապետից և կամ առանձին խօսել նրա հետ, պէտք է իւր հետ ընծայ բերի: Այս վերջին գէպքերը մեզ ցոյց են տալիս, թէ ինչպէս ընծայաբերութիւնը կամաւոր լինելուց հետզհետէ դառնում է պարտադիր: Եւ յիշաւ՝ երբ տեսնում ենք, որ Տայիտում զօրապետները, ի հաճոյս Թալանում են իրենց հպատակների տնկարանները և Ֆիտշում զօրապետները բռնութեամբ իւրացնում բնակիչների և՛ ունեցուածքը և նոյն իսկ իրենց, չենք կարող չգալ այն բացայայտ եզրակացութեան, որ ընծայաբերութիւնը դառնում է մի մասը նուիրաբերելու գործողութիւն՝ ամբողջ ունեցուածքի կորստի առաջն առնելու նպատակով: Ամբողջ Տաճկահայաստանում հայ ժողովրդի թուրք բէկերին ու աղաներին մատուցած ընծաների բուն իմաստը միայն այդ է:

Ընծայաբերութեամբ միևնոյն ժամանակ հասնում են երկու նպատակի.— Բաւարարութիւն է տրւում ազահութեան և յայտնւում հպատակութիւն: Մալագազները, ինչպէս ստրուկները, նոյնպէս և ազատները, ժամանակ առ ժամանակ ընծայաբերում են իրենց զօրապետներին ուտելիղէններ, սրանով արտայայտելով իրենց հպատակութեան զգացմունքը: Հասկանալի է, որ որքան զօրեղանում է զօրապետների իշխանութիւնը, այնքան աւելանում է հպատակների ցանկութիւնը՝ նրանց դուր գալու, միանգամայն նախատեսելով զոհացումն տալ նրանց ազահութեան և արտայայտել իրենց անձնուիրութեան զգացումները:

Սակայն, շատ հազիւ է նկատուում, որ ստորին ժողովուրդների մէջ զօրապետին ընծաներ մատուցանելը դառնար մի ընդունուած ծէս: Սկզբում զօրապետը, շատ քիչ տարբերուելով իրեն ստորադրուած անձերից, այնքան երկիւղ չի ազդում սերնդի միւս անդամների վրայ, որ բաւականանար ընծայաբերութիւնը սովորական ծէս դարձնելու:

Միայն բարդ, մի քանի ժողովուրդներից բաղկացած, հասարակութիւնների մէջ, որոնց տիրել է մի յաղթական ժողովուրդ,

առաջին անգամ ծագում է մի իշխող դասակարգ, բաղկացած աւագ ու կրտսեր զորապետներից, մի դասակարգ, որ բաւականաչափ տարբերուում է միւսներից և որ բաւական զօրեղ է՝ ներշնչելու հարկաւորուած երկիւղը: Վերև բերուած բոլոր օրինակներն առնուած են այն ժողովուրդներից, որոնց մէջ կառավարութիւնը արդէն ստացել է թագաւորական իշխանութեան ձև:

ԻԲ.—Ընծայաբերութեան ծէսը միաժամանակ ընդունում է մի այնպիսի ձև, որ աւելի տարածուած է: Այնտեղ, ուր ստորադրուած զորապետների հետ ապրում է և ընդհանուր զորապետը, վերջինիս մեծարում են ինչպէս ժողովուրդը, այնպէս նրան ստորադրուած կառավարիչները: Այստեղից ծագում է ընծայաբերութեան երկու ձև: Տիմբուկտուում ընծաներ մատուցանելու սովորութիւնը դեռ ևս պահպանել է իւր նախնական ձևը: Այստեղ «թագաւորը հարկ չի դնում ճշ իւր հպատակների և ճշ էլ օտարերկրացի վաճառականների վրայ, սակայն ստանում է նրանցից ընծաներ»: Բայց Կալիէն աւելացնում է. Նրանք կանոնաւոր կառավարութիւն չունին. թագաւորը յիշեցնում է մի հայր, որ կառավարում է իւր որդիներին: Երբ վէճ է ծագում, շնա ժերունիների խորհուրդ է կազմում: Ուրիշ խօսքով ընծայաբերութիւնը կամաւորապէս կատարւում է այնտեղ, ուր թագաւորական իշխանութիւնը զօրեղ չէ:

Հայ մելիքների տիրապետութեան միջոցին վաճառականները միայն ընծաներ են մատուցել մելիքին և որոշ տուրք վճարելու սովորութիւնը բոլորովին չէ եղել: Այժմ միևնոյն կարգը գոյութիւն ունի քիւրդ և թուրք բեկերի մէջ:

Կաֆրների մօտ ընծայաբերութիւնը դադարում է կամաւոր լինելուց: «Թագաւորի եկամուտը կազմում են տարեկան հարկերը, որ վճարում են կենդանիներով, երախայրէքով, և այլն:

Երբ կուսան (կաֆր) բաց է անում իւր շտեմարանը, նա պարտաւոր է մի քիչ հացահատիկ ուղարկել հարևաններին, և բաւականաչափ թագաւորին: Հարէշտանում պատահում ենք միաժամանակ թէ պարտադիր և թէ կամաւոր ընծայաբերութեան սովորութեան: Տիգրէ իշխանը բացի ընդունուած հարկերից, ստանում է նաև տարեկան ընծաներ: Պարզ է, որ երբ նուէրները, պարտադիր դառնալով, կորցրել են իրենց գթարար նշանակութիւնը, ձգտումն է առաջացել նոր, կամաւոր ընծայաբերութեան, որ գթարար ազդեցութիւն կարող էր ունենալ անակնունելի լինելով:

Եթէ մասնաւոր անձերից, թագաւորին կամ զօրապետին

ընծաներ մատուցանելն արդէն համարոււմ է հպատակութիւն արտայայտող գործողութիւն, ապա ուրեմն ստորագրուած պետերի կողմից վեհապետին մատուցած ընծաներն ևս աւելի զօրեղ կերպով պիտի արտայայտէին այդ հպատակութիւնը:

Այստեղից ընծաներն ստանում են գերիշխանութիւնը ձեռնապէս ճանաչելու նշանակութիւն: Հին Վիրա-Պասում Թագաւորի ընտրութիւնից անմիջապէս յետոյ... բոլոր զօրապետները ներկայանում էին նրան և կամ ուղարկում էին իրենց ազգականներին... ընծաներով: Զիրչանների մէջ, նոր Թագաւորի գահակալութեան միջոցին, զօրապետներն երդում էին, որ լինելու են նրան հաւատարիմ և հնազանդ վասսալները և իբր ապացոյց իրենց անուիրութեան՝ իւրաքանչիւրը մատուցանում էր նրան մի մի Թանգագին քար, մի քանի ճագար և այլն:

Իսկ մեքսիկացիների մասին Տօրիբիօն ասում է հետեւեալը. Ամեն տարի, մի քանի տօների ժամանակ, այն հնդիկները, որոնք հարկ չէին վճարում, մինչև անգամ զօրապետներ էլ, ընծաներ էին տալիս իրենց վեհապետին, 'ի նշան հպատակութեան: Միևնոյնը տեղի էր ունենում և Պերուում: Ոչ ճշ չէր մօտենում Ատահուալպան առանց ընծայի, որ ծառայում էր իբր հպատակութեան նշան: Ընծայաբերութիւնը իբրև հաւատարմութեան զգացմունքի արտայայտութեան նշան պարզւում է Ս. Գրքի հետեւեալ երկու հակադրութիւնից. իբր ապացոյց Սողոմոնի գերիշխանութեան ասում է, որ ամենայն Թագաւորք երկրի խնդրէին զերեսս Սողոմոնի տեսանել, և նոքա բերէին իւրաքանչիւր ոք ընծայ նմա անօթս արծաթեղէնս, և անօթս ոսկեղէնս... ամի ամի: (Բ. Մնացորդաց Թ. 23):

Ընդհակառակը երբ Սաւուղը ընտրուեց Թագաւոր, ընդ որդիք ժանտք ասէին, Թէ Տ իցէ սա՝ որ փրկիցէ զմեզ՝ և ոչ բերին նմա պատարագս: (Գիրք Առաջին Թագաւորութեանց. Ժ. 27)

Ամբողջ Արևելքում աւագ զօրապետին ընծաներ մատուցանելը միևնոյն նշանակութիւնն ունի:

Եւրոպայի նախնական պատմութիւնը նոյնպէս ներկայացնում է բաւականաչափ օրինակներ ընծաներ մատուցանելու և նրանց նշանակութեան մասին: Մերովինգների շրջանում բտարին մի անգամ, մի որոշ օր, ժողովուրդը, հին սովորութեան համեմատ, մատուցանում էր Թագաւորին ընծաներ Մարտեան դաշտում, և այս սովորութիւնը շարունակուել է նաև Կարօլինգների ժամանակ: Ընծաներ մատուցանում էին ինչպէս մասնաւոր անձեր, այնպէս և համայնքներ: Գոնտրանի ժամանակից սկսած, որին Օրլեանի բնակիչները նրա քաղաք մտնելիս ծածկեցին ըն-

ծաներով, քաղաքները երկար ժամանակ շարունակում էին այս միջոցով հայցել իրենց այցելող միապետների շնորհը։ Միևնույնը նկատելի է և հին Անգղիայում։ Թագաւորին մատուցանելի ընծաները այնպիսի մեծ ծախսեր էին պահանջում, որ եերեմի Թագաւորի ընտանիքի կամ նրա արքունիքի մի քաղաք այցելելը որպէս մի մեծ աղէտ էր նկատւում։

ԻԳ.— Վերոյիշեալ փաստերից կարելի է եզրակացնել որ քաղաքական իշխանութեան զօրեղանալու համեմատ, գթարար ընծաները փոքր առ փոքր կամաւոր և մասնաւոր ձևից դառնում են աւելի պակաս կամաւոր և աւելի ընդհանուր և սկիզբն են տալիս ընդհանուր և պարտադիր տուգանքի, որոշ տուրքի. իսկ դրամի ծագմամբ տուրքը դառնում է հարկ։ Թէ ինչպէս է կատարւում այս ձևափոխումը, պարզ երևում է պարսկական սովորութիւններից.— Մալկումը, խօսելով այն անկանոն և ծանր հարկերի մասին, որոնց պարսիկները շարունակ ենթարկուած են, նկատում է. Այս հարկերից առաջինները կամ լրացուցիչները կոչւում են սովորական և արտակարգ ընծաներ։ Սովորական ընծաները, որ մատուցւում են Թագաւորին, նրանք են որ ամեն տարի տալիս են նահանգների և շրջանների կառավարիչները, ժողովրդների զօրապետները, մինիստրները և միւս բարձրաստիճան պաշտօնեաները նովրուզի տօնախմբութեան միջոցին։ Այս ընծաների քանակը որոշւում է ընդհանրապէս սովորութեան համեմատ, ով նշանակուածից պակաս կը բերի, կը խիզախի պաշտօնը կորցնելու, ով աւելի կը բերի՝ կարժանանայ Թագաւորի աւելի մեծ շնորհին։

Ընծայաբերութեան պարբերական հարկի փոխուելը շատ լաւ նկատելի է մի քանի, համեմատաբար ճշ այնքան մեծ, սակայն կառավարչական լաւ ամրապնդուած, հասարակութիւնների սովորութիւնների մէջ։ Տօնգա կղզու վրայ՝ բաւազ զօրապետները սովորաբար, մօտաւորապէս երկու շաբաթը մի անգամ, Թագաւորին ընծայ են մատուցանում կամ խոզեր, և կամ իհնամի արմատներ. իրենց հերթում նրանք էլ ընծաներ են ստանում իրենց ստորադրեալներից. իսկ սրանք այն անձերից, որոնք կանգնած են նրանցից աւելի ու աւելի ցած, և այնպէս մինչև հասարակ ժողովուրդը։ Հին Մեքսիկան, որ բողկացած էր զանազան աստիճանի կախումն ունեցող շրջաններից, ներկայացնում է և՛ ընծայաբերութիւնից հարկի անցնելու դանազան աստիճանները։ «Շրջանները... վնարում էին պատերազմական տուգանքներ... տիրապետութեան ժամանակից իվեր այն նպատակով, որ յաղթանակող մեքսիկացիները խնայէին նրանց և դադարէին կողոպ-

տելուցն: Սա ցոյց է տալիս, որ ընծաները տրուել են գթութիւն հայցելու նպատակով: Մեցտիտլանում տուրքը որոշ ժամանակում չի վճարուում, այլ երբ պետք կարիք է զգում: Յայտնի է, որ Մոնդեգուամայի Թագաւորութեան զանազան երկրների բոլոր ժողովուրդներից ռումանք հարկ վճարում էին ամեն տարի, ռումանք ամեն կիսամեկին և ռումանք ամեն շաբաթն:

Ռումանք ընծաներ էին տալիս աօն օրերին Վի նշան իրենց հպատակութեանն որի պատճառով և Տօրիբօն ասում է, թէ ըստ երևոյթին զօրապետները, վաճառականները և հողատէրերը պարտաւորուած չէին հարկ վճարելու, սակայն կամաւոր կերպով տալիս էին:

Կամաւոր ընծաներից դէպի պարտադիր հարկերն անցնելը կարելի է նկատել նաև Սւրուպայի պատմութեան մէջ: Վայցը Թուելով Միրավինգեան հարստութեան Թագաւորների եկամուտների աղբիւրները, յիշում է կամաւոր ընծաների մասին, որ մատուցանում էր ժողովուրդը զանազան հանգամանքներում, բացի տարեկան ընծաներից, որոնք սկզբում մատուցւում էին Մարսեան ժողովների ժամանակ: Յետոյ նոյն հեղինակը խօսելով այդ միևնոյն ընծաների մասին Կարօլինգեան շրջանում, նկատում է, որ դրանք վաղուց կորցրել են կամաւոր բնոյթը, և որ արդէն Հինկմարը դրանց մասին խօսում է որպէս հարկերի մասին: Դրանք բաղկացած էին ձիերից, ոսկուց, արծաթից, Թոնգազին իրերից, հանդերձներից (կուսանոցներից) Թագաւորի դրան համար պատրաստած ուտեստի պաշտրից: Վայցը աւելացնում է, որ այս հարկերը կամ tributa-ն կրում էին աւելի կամ պակաս մասնաւոր բնոյթ: Թէև նրանք պարտադիր էին, ստիպողական, սակայն չի կարելի նրանց հարկ անուանել բառիս բուն իմաստով: Միևնոյնը կարելի է ասել և այն իրերի վերաբերմամբ, որ վասսալները մատուցանում էին իրենց սինեօրներին: Dona-ն, որ սկզբում, ինչպէս ցոյց է տալիս և ինքը բառը, եղել է կամաւոր ընծայ, XII դարում փոխուել է հողային հարկի, որ ստանում էին սինեօրները:

ԻԴ. — Եթէ կամաւոր ընծաները, որ մատուցւում են բարձրագոյն իշխանութիւն ունեցող անձերին, փոքր առ փոքր դառնում են հարկ, և ի վերջոյ ստանում միանգամայն ընդունուած եկամտի ձև, չի՞ կարելի արդեօք սպասել, որ միևնոյնը լինի և այն ընծաների վերաբերմամբ, որոնք մատուցւում են այն ստորագրեալ անձնաւորութիւններին, որոնց օգնութիւնը մի որոշ դէպքում ցանկալի է համարւում, և որ դրանք հետզհետէ միևնոյն

կերպով դառնում են սովորական ընծաներ, և ի վերջոյ ամբարպնդւում: Պետական բարձր պաշտօնեաներին ընծաներ մատուցանելու գործողութեան զարգացումը չի կրկնւում արդեօք և ստորին պաշտօնեաների վերաբերմամբ: Իրականութիւնը մեր այս հարցերին տալիս է դրական պատասխան:

Նախ պէտք է նկատել, որ կառավարիչը հասարակական զարգացման նախնական աստիճաններում, բացի սովորական ընծաներից, ստանում է նաև առանձին ընծաներ և՛ այն դէպքերում, երբ նրան խնդրում են իւր իշխանութիւնը գործադրել՝ օգնութիւն հասցնելու վերաւորուած հպատակին: Զիջանքների մէջ եղ ռք չի համարձակւում մօտենալ թագաւորին, կամ հէնց իրենից բարձրին, առանց ընծաների, որոնք պիտի յանձնուին նախ քան խնդիրը մատուցանելը: Ահա թէ ինչ է ասում Դրիւնը Իւմֆի հանգուցնալ կառավարիչ Դիւլար-Մինգի մասին: Առանց մի բուրիս վճարելու իբր նազար (ընծայ), չի կարելի ստիպել նրան լսելու խնդիրը, մինչ զեռ մինչև անգամ ամբոխի մէջ կարելի է գրաւել նրա ուշադրութիւնը, վերև բարձրացնելով բուրին և ըզաւելով Մահարաշա՝ խնդիր: Նա բազէի պէս յարձակւում է դրամի վրայ և համբերութեամբ լսում խնդրատուին: Ապացոյցներ կան, որ և Անգլիայում, միևնոյն դրութիւնն է տիրել: Մենք համարձակ կերպով կարող ենք պնդել, ասում է Բրումը, Լինգարտի մի նկատողութեան առթիւ, որ այն ժամանակ (Անգղո-Մաքսոնեան շրջանում) շատ քիչ թագաւորներ իրենց պարտականութիւնները կատարելիս լիովին ազատ են եղել իրենց սիրելիների ազդեցութիւնից, կամ կաշառքի պատրանքից և կամ ժլատութեան և ազահութեան շարժառիթներից:

Բնական է, որ երբ դատաստանական և այլ իշխանութիւններն անցնում են առանձին, յատուկ այս պաշտօնների համար նշանակուած անձերի ձեռքը, ընծաներն էլ նոյն կերպ մատուցւում են այս վերջիններիս: Սկզբում կամաւոր, վերջում դառնում են պարտադիր: Հին յիշատակարաններն այս մասին շատ ապացոյցներ են բերում: Այսպէս՝ Ամոս մարգարէի խօսքերից (II. 6) կարելի է եզրակացնել, որ դատաւորներն ստանում էին ընծաներ, ինչպէս ստանում են և այժմ թուրք պաշտօնեաները միևնոյն հանգամանքներում: Կիրգիզների մէջ՝ չղատաւորն ընծայ է վերցնում երկու կողմից էլ: Ինչպէս մարգարէն, այնպէս և ժամանակակից դիտողը, կարծում են, թէ այս սովորութիւնը ծագել է բարքերի անկմամբ. թէ առաջինը և թէ երկրորդը ընդունել են հասարակական զարգացման ստորին աստիճանի յարատեւումը իբր բարձրի անկումն: Ֆրանսիայում թագաւորը 1256 թ.

ստիպել է դատարանի թէ՛ բարձր և թէ՛ ստորին պաշտօնեաներին երդուիլ, որ ոչ ընծաներ տան և ոչ էլ ընդունեն, այլ արդարութիւնը պաշտպանեն անաչառութեամբ: Սակայն և այնպէս՝ ընծայաբերութիւնը շարունակուել է: Դատաւորներն ստանում էին դատը տանողներից այսպէս կոչուած *épices* (շաքարեղէնք) ընծան ի նշան շնորհակալութեան: Մօտ 1369 թւին *épices*-ի փոխարէն տալիս էին դրամ, իսկ 1402 թ. դրամական նուէրը դարձել է տուրք: Անգղիական տարեգիրները մատնանշում են դատաւորներին և նրանց մերձաւորներին ընծաներ տալու սովորութեան վրայ. բարձրաստիճան մարդկանց և դրան ծառայողներին մօտենում էին միայն ընծաներ տալով, հետեւելով արևելեան բարքերին: Ապացոյց, որ անցեալում պետական պաշտօնեաներին մատուցուող գթարար ընծաները կազմել են երբեմն իրենց եկամտի միակ աղբիւրը, կարելի է յիշել այն հանգամանքը, որ XII դարում արքունիքի բարձր պաշտօնները վաճառում էին: Սըանից երևում է որ ընծաների արժէքը բաւական մեծ եղած պիտի լինէր, որ փոխարինել է պաշտօնը զնելու համար վճարուած գինը: Ռուսաստանը կարող է ծառայել իբր մի լաւ ասպացոյց այս խօսքերի: Կարամզինը կրկնում է Մոսկուայի թագաւորութիւնը XVI դարում այցելող ճանապարհորդների նկատողութիւնը: Եհարելթ է զարմանալ, ասում էին այս օտարականները, որ մեծ իշխանը հարուստ է: Նա չի վճարում ոչ իւր զօրքին և ոչ էլ դեսպաններին. նա մինչև անգամ այս վերջիններից վերցնում է օտար երկրներից նրանց բերած թանգագին իրերը... Եւ չը նայելով սրան, այս մարդիկը չեն դանդաւաւում: Սըանից պէտք է եզրակացնել, որ պաշտօնական անձնաւորութիւնները կառավարութիւնից ոռճիկ չստանալով ապրում էին ժողովրդից ստացած ընծաներով: Պարզ է նաև, որ այժմեան կաշառքները, որ պահանջում են քիչ ոռճիկ ստացող պաշտօնեաները Ռուսաստանում, նախ քան իրենց պարտականութիւնը կատարելը, ոչ այլ ինչ են, եթէ ոչ այն ընծաների մնացորդ, որ կազմում էին նրանց գոյութեան միակ միջոցը այն ժամանակներում, երբ նրանց ոռճիկ չէր տրւում: Միևնոյնը կարելի է ասել նաև Սպանիայի վերաբերմամբ: Ռոզն ասում է, թէ՛ դատաւորից մինչև օստիկանը խմորուած են կաշառակերութեամբ: Բայց կայ մի մեղմացուցիչ հանգամանք խեղճ սպանացի պաշտօնեայի վերաբերմամբ. — կառավարութիւնը նրան ոչ մի վարձատրութիւն չի տալիս, այլ սպանում է ամեն ինչ:

Որոշ ծառայութիւնների համար մի որևէ բան վճարելու սովորութիւնը այն աստիճան միս ու արիւն է դարձել, որ մենք

ենթադրում ենք, որ այդպէս էլ եղել է հէնց սկզբից: Սակայն այնպիսի փաստեր, ինչպէս, օրինակ, այն, որ թոյլ կազմակերպուած հասարակութիւնների մէջ, ինչպէս ըիշուաններն են, զօրապետները տալիս են իրենց մերձաւորներին միայն մի փոքր բաժին կերակուր և կաթ, և թողնում են նրանց որ լրացնեն անհրաժեշտ ապրուստը սրտորդութեամբ և «վայրի արմատներ հանելով», կամ, որ մինչև անգամ անհամեմատ աւելի զարգացած հասարակութիւնների մէջ, ինչպիսին է օր. Դազմէն, պետական ոչ մի պաշտօնեայի ռոճիկ չի տրւում, այս բոլորը կատարելապէս ցոյց է տալիս որ ստորագրուած զօրապետներին կառավարութիւնը սկզբում չէ պահել, ուստի և ստիպուած են եղել իրենք որոնելու իրենց գոյութեան միջոցները: Եւ քանի որ նրանց դիրքը միջոց է տուել նրանց օգուտ բերել կամ վնաս հասցնել իրենից ստոր կանգնած մարդկանց, և քանի որ, վերջապէս, երբեմն, կարելի չէ եղել մերձենալ վեհապետին առանց նրանց միջամտութեան, ընական է, որ միևնոյն շարժառիթները, որոնք գոյութիւն են ունեցել վեհապետների վերաբերմամբ, գործել են նաև ստորագրուած կառավարիչների վերաբերմամբ և պատճառ դարձել նրանց բարեհաճութիւնը ևս գրաւել ընծաների միջոցով: Այստեղից էլ զուգահեռաբար ծագել է եկամտի այս աղբիւրի զարգացումը: Արևելքը լի է այսպիսի փաստերով: Ծառաններից կամ ստրուկներից ոչ մինը ռոճիկ չի ստանում, միայն տարեկան մեծ տօներին տէրը նուիրում է նրանց խալաթ, հանգեթ, նրանք ստանում են նաև նուէրներ, մեծ մասամբ դրամական (բակշիշ), այն այցելուներից, որոնք գործ են ունենում նըրանց տիրոջ հետ և ցանկանում են, որ յարմար դէպքում իրենց մասին մի բարի խօսք ասեն նրան:

Ինչ որ ասուեց Արևելքի մասին ընդհանրապէս՝ կարելի է մասնաւորել և Հայաստանի վերաբերմամբ, որպէս նրա մի մասի: Հայ մեղիքների ծառաները, զօրքը, զօրապետները երբէք ռոճիկ չեն ստացել, այլ շատացել են միայն մեղիքից ստացած պարգևներով, որ խալաթ է կոչուել և ժողովրդի տուած նուէրներով:

Նոյն իսկ այժմ դեռ շատ տեղերում, գիւղական տանուտէրները, դատաւորները և գզիրները որոշ ռոճիկ չեն ստանում, այլ կառավարւում են ժողովրդից ստացած նուէրներով, որոնք հետզհետէ պարտադիր ծէսի ձև են ստացել. այսպէս, օր. տանուտէրին նոր տարուն ամեն մի տուն մի շիշ օղի և մի գոյգ քոշ է ընծայում, զատկին մի մի գառ և հաւկիթներ: Ամեն մի պատկուող մի գոյգ մաշիկ կամ քոշ և մի կամ 2 բուրլի դրամ է՝ ընծայում: Նաև ձրիաբար հնձում են նրա արտերը, ամեն տնից մի մշակ տալով:

Դատաւորներին, գլխաւորապէս դատ ունեցողները, տօներին ընծաներ են տալիս, սակայն սրանց եկամտի աղբիւրը կազմում է գլխաւորապէս կաշառքը, որ երբեքն զանգատաւորների երկու կողմից էլ են առնում: Սմբատ պատմագրի հետեւալ խօսքերը ցոյց են տալիս, որ հնումը ևս հայ դատաւորները ազատ չեն եղել այդ ախտից:— Բայց պարտ է ամենայն դատաւորաց գիտեմալ, որ երազի նման է աշխարհիս ամեն վայելուածը, և անցաւոր և ամենայն ծուռ դատաստանաց համարս տալոց են առաջի ուղիղ դատաւորին Քրիստոսի: Զամէն, զինչ որ աստէն առնէք դուք, անդէն գտանելոց էք թէ չար և թէ բարի: ¹⁾

Ին.— Քանի որ տիրում է այն հաւատը, թէ մեռած անձի կրկնակը, որ ամեն բանով նման է իրեն, ենթարկուած է, կենդանի էակներից ոչ պակաս, տանջանքի, ցրտի, քաղցի, ծարաւի, այստեղից բնականաբար ծագում է այն ենթադրութիւնը, որ նա ևս կարիք է զգում ուտեստի, խմիչքի, հանդերձի և այլն: Հետեւապէս և ննջեցեալներին մատուցուած ընծաները չեն տարբերւում կենդանիներին մատուցուած ընծաներից, ոչ իրանց շարժառիթներով և ոչ էլ նշանակութեամբ:

Սրան իբր ապացոյց կարող են ծառայել ամբողջ աշխարհիս բոլոր ստորին հասարակութիւնները: Պապուացիները, տայիտեանները, Սանդվիչեան կղզիների բնակիչները, մալանանները, բադագանները, կարէնները, հին պերուացիները, բրազիլացիները և ուրիշներ դեռ չը թաղուած դիակների մօտ դնում են կերակուր և խմիչք:

Միևնոյնը տեղի է ունենում և վրահայոց մէջ. դեռ քանի ննջեցեալը տանն է՝ նրա բաժին կերակուրն ու խմիչքը թէ նախաճաշիկին, թէ ճաշին և թէ ընթրիքին, դնում են նրա սնարի մօտ և մի կարճ միջոցից յետոյ վերցնում տալիս աղքատների և կամ ննջեցեալի հասակի մի անձի՝ ուտելու:

Ոմանք էլ զինեսէր ննջեցեալների դագաղում մի քանի շիշ գինի են դնում, ինչպէս և մանուկի դագաղում մրգեր ²⁾:

Բուլանըխում հայերը մի ամբողջ տարի ննջեցեալի տնից օրական մի բաժին կերակուր են ուղարկում մի աղքատի տուն՝ իբր ննջեցեալի հոգեբաժին ³⁾:

Վասպուրականում մինչև ննջեցեալի եօթը կամ քառասուն-

¹⁾ Յիշ. Բաստմահան. Միխիթար Գոշի Դատաստանագիրք Հայոց. Վաղարշապատ 1880. եր. 319.

²⁾ Վրահայոց Ազգազրութիւնը (անտիպ). Ե. Լալայեանի.

³⁾ Բենէ. Բուլանըխ.

քը կատարելը ամեն օր հրաւիրում են քահանային, տիրացուներին, ժամհարին և մի քանի աղքատ՝ ննջեցեալի տունը՝ ճաշելու, իսկ Վանում՝ փոխանակ սրանց տուն հրաւիրելու՝ ճաշը ուղարկում են եկեղեցի, որպէսզի անտեղ ճաշեն վերոյիշեալ անձնաւորութիւնները. այս ճաշերը կոչւում են հոգեբաժին կամ հոգեճաշ, Թաղման օրը, եօթին, քառասունքին և տարելիցին մեծ բազմութեան ճաշ են տալիս:

Կերակուր և խմիչք դնում են գերեզմանի վրայ ննջեցեալին. Թաղելուց յետոյ հետեւեալ ժողովուրդները. Աֆրիկայում՝ Շէմբօ, Լօզնդօ, ստորին նեզրները, դազօմէյները և ուրիշներ: Հնդկաստանում հետեւեալ լեւնային ժողովուրդները՝ բիբերը, սանտալները, կուկիները. Ամերիկայում՝ կարիբները, չիբչասները, մեքսիկացիները: Միևնոյն սովորութիւնը տարածուած է եղել նաև Արևելքի բոլոր հին ժողովուրդների մէջ:

Հայկական գրեթէ բոլոր գաւառներում մեռելոցի օրերը ու տեղեղէն, խմիչք ու մրգեր են տանում գերեզմանատուն, ու գերեզմանները օրհնելուց յետոյ՝ իրենք ուտում, խմում են, նախապէս փոքր ինչ խմիչք ամեղով գերեզմանի վրայ, և յետոյ էլ մնացորդները դնում են գերեզմանի վրայ:

Վասպուրականում ասագ ուրբաթ և զատիկ մեռելոցի օրը հաց են թխում և բաժանում աղքատներին, շատ տեղեր էլ ինչպէս օրինակ Ղարաբաղում, Ապարանում, ասագ ուրբաթ, զատիկ ու Աստուածածնի վերափոխման մեռելոցի օրերն ամէն տարի կերակուրներ են տանում գերեզմանատուն և կամ եկեղեցի և այստեղ միասին ուտում են ու հոգեհանգիստ կատարում համայն ննջեցելոց համար: Կերակրների մնացորդները կամ դնում են գերեզմանների վրայ և կամ բաժանում աղքատներին:

Կարնեցիք և Կարնոյ գաղթական աղէքսանդրապօլիք, տխալքալաքցիք և ախալցխացիք հետեւեալ սովորութիւնն ունին: Սուրբ Խաչի տօնին ննջեցեալների մօտիկ բարեկամները մի մի ուլ, մի մի սև շալ և մի մի սև աղլուղ ուղարկում են սգեւաւունք, ուր ուլից պատրաստում են քնսչկնակ*, տանում գերեզմանատուն, իրենց նոր ննջեցեալի գերեզմանը օրհնել տալիս և ապա այդ բարեկամներին հետ գերեզմանի մօտ նստած ուտում քնաշկնակը և աւելացածը դնում գերեզմանի վրայ:

* Քնաշկնակը պատրաստում են այսպէս. Զաւարը խալում են, քամում և դնում թոնրի մէջ, ապա կաշեհան արած ուլը կախում են նոյն թոնրի մէջ այնպէս, որ սրանից հոսած իւղը կաթի ձաւորի մէջ, ինչը ուլը խորովում է. հանում են, կտրատում, խառնում ձաւորի հետ, նախապէս սոխորած աւելացնելով:

Որոշ ժամանակներ էսկիմոսները նուիրում են մեռելներին հանգերձներու Պատագոնացիները ամեն տարի բաց են անում շիրիմները և զգեստաւորում մեռելին նոր հանգերձով. միևնոյն անում էին և հին պերուցիները, Կոնգոում մի որևէ զօրապետի մահուան ժամանակ ընծայաբերուած հանգերձների քանակը այնքան մեծ է լինում, որ առաջին խուղը, ուր դնում են դիակը՝ փոքր է գալիս, այնպէս որ անհրաժեշտ է համարւում շինել երկրորդը, երրորդը և ի վերջոյ և վեցերորդը. մէկը միւսից աւելի մեծ։ Մեռած վհապետի ոգուն, նրա ստորագրեալ պաշտօնեաների մատուցած ընծաները համազօր են այն ընծաներին, որ տալիս էին նրան՝ կենդանութեան ժամանակ։ Տավերնիէն այսպէս է նկարագրում Թագաւորական Թաղումը Տոնկինում... Յետոյ դնում են վեց իշխանուհի ուստիստ և խմիչք տանելով մեռած Թագաւորի համար... Սրանց հետևում են Թագաւորութեան չորս գլխաւոր նահանգների նահանգապետները, իւրաքանչիւրը ուսին դրած մի գաւազան, որի ծայրից կախուած է ոսկով և զանազան խնկերով լի մի պարկ, այս պարկերում դրուած են լինում այն ընծաները, որ մատուցել են մեռած Թագաւորին զանազան նահանգներից այն նպատակով, որ Թագին նրա դիակի հետ, որպէսզի միջոց տան նրան՝ օգտուելու դրանցից միւս աշխարհում։ Ոչ մի կասկած չի կարող լինել, որ այս վարժուէքը յառաջանում է այդ միևնոյն տրամաբանութիւնից, ինչպէս պարզ երևում է նոր կալէտոնացի զօրապետի իւր նախահօր ոգուն ուղղած հետևեալ դիմումից. «Ողորմած հայր, ահա քեզ կերակուր, ճաշակիր նրանից և բարի եղիր գէպի մեզ և կամ ինչպէս վեղդահը տալով իւր մեռած ազգականի անունը՝ բացականչում է. «Մէկ և բաժանիր այս մեզ հետ. պահպանիր մեզ այժմ էլ, ինչպէս պահպանում էիր կենդանի ժամանակդ»։ Այստեղից դժուար չէ հանել այն եղբակացութիւնը, որ ննջեցեալին արուած ընծայաբերութիւնը այն միևնոյն նշանակութիւնն ունի՝ ինչ կենդանի էակին արուած ընծայաբերութիւնը, այն միակ տարբերութեամբ, որ ընծայ ստացողը աներևոյթ է։

Նկատենք նաև, որ գերբնական էակների, որոնցով շրջապատուած է երևակայում իրեն նախնական մարդը, բարեհաճութիւնը մի որևէ ձևով հայցելու շարժառիթն էլ միևնոյնն է։ Սկանդինաւցիները հացի և իւղահացի կառններ էին դնում մի կողմ՝ էլֆէրին կերակրելու նպատակով։ Դալեականներ իրենց խուցերի կառններին շարում էին ուտելիղէններ և խմիչք, ոգիներին կերակրելու համար։ Աշխարհիս երեսի շատ ժողովուրդներ ճաշե-

լուց առաջ իրենց կերակրից և խմիչքից փոքր ինչ ձգում էին ոգիների համար:

Այժմ տեսնենք, թէ այս ձէսը ինչպէս է զարգանում միաժամանակ, երբ դերձնական էակի պաշտամունքն էլ զարգանում է: Ընծայաբերուած իրերը և ընծայաբերութեան շարժառիթները մնում են միևնոյնը, ինչ որ էին վերոյիշեալ դէպքերում, թէպէտև նրանց նոյնութիւնը փոքր ինչ մթազուշում է՝ երբ զոհ է առնուանում աստուածների և ընծայ՝ կենդանի մարդկանց վերաբերմամբ: Նրանց սկզբնական նոյնութիւնը խիստ կերպով երևան է գալիս յունաց հետևեալ առածի մէջ. «Ընծաները որոշում են աստուածների և մարդկանց գործողութիւնները»: Այսպէս և՛ Սաղմոսի մի տան մէջ (Հն. 11) «Ուխտս զիք և կատարեցէք Տեառն Աստուծոյ մերոյ, ամենեքեան ոյք շուրջ էք զնովաւ: Մատուցէք պատարագս անւորին: Դեռ աւելի, մանրամասնութիւնների մէջ ևս գտնում ենք չափազանց մեծ նմանութիւն:

Ուտեստն ու խմիչքը, որ կազմել են գթարար ընծաների ամենատախնական տեսակը, որ մատուցում էին կենդանի մարդկանց, ինչպէս և՛ ոգիներին, միաժամանակ կազմում են աստուածներին մատուցուող զոհաբերութեան էական մասը: Այն երկրներում, ուր իշխանութիւնը դեռ նոր է սկսում զարգանալ, զօրապետներին ուղարկուող ընծաները զլիաւորապէս բաղկացած են լինում ուտելիքներից, այնտեղ ուր զարգանում է նախնիքների պաշտամունքը, ուր այս պաշտամունքը ոգուն զարմնում է աստուած, զոհաբերութիւնները բաղկանում են նոյնպէս, մեծ մասամբ, բոլոր տեղերում և ամեն ժամանակ ուտելիքներից և խմիչքներից: Որ այս միանգամայն ճիշտ է ստորին հասարակութիւնների վերաբերմամբ, ապացոյց էլ չի պահանջում, իսկ ինչ վերաբերում է բարձր հասարակութիւններին, այս ևս հանրածանօթ մի փաստ է, թէպէտ և երբեմն ուրանում են:

Երբ զուլուը մորթում է մի եզ, որպէս զի կարողանայ զբաւել իւր մեռած ազգականի ոգու բարեհաճութիւնը, այն ոգու, որ երևում է նրան երազում և գանգատում, որ լաւ չէ սննդում, երբ այս միևնոյն ժողովրդի մէջ այս մասնաւոր գործողութիւնը փոխում է հասարակական գործողութեան, օրինակ, երբ պարբերաբար մորթում են մի եզ շիրք գթարար զոհաբերութիւն թաղաւորի ամենամօտ նախահօր ոգուն—կարող ենք, իրաւամբ հարցնել, արդեօք միևնոյն պատճառները չե՞ն ծագեցնում այսպիսի գործողութիւններ, ինչ որ ստիպել էր եգիպտացի մի թագաւորի, մորթել հարիւր եզ, իւր աստուածացրած հօր ոգուն զուր գալու համար: Բայց տեղիք չկայ ննթադրելու որ միևնոյն ծագումն ու-

նի և՛ Ենովային զոհած եղները, որոնց մասին մանրամասն տեղեկութիւններ կան Ղևոնդոսի զրքում: Յոյների մէջ սովորութիւն կար, որ աստուածներին մատուցանում էին այն ծառայութիւնները, որոնց կարիք ունէին կենդանի մարդիկ. տաճարները համարում էին աստուածների տները, զոհաբերութիւնները՝ նըրանց կերակրները, բեմերը — սեղաններ: Այս դէպքում կարելի է ցոյց տալ, որ աստուածներին մատուցուող ուտելիքներին կազմուած ընծաները և մեղաների զերեզմանների վրայ զրուող ընծաները միեւնոյն ծագումն ունին, որովհետեւ թէ առաջինները և թէ երկրորդները ծագել են կենդանի մարդկանց մատուցուող ընծաներից, բայց, չի կարելի թոյլ տալ, որ Ենովային առաջարկուած միսը, հացը, պտուղները և գինին միեւնոյն սովորութիւնից են ծագում: Պէտք է այդ մերժել, չընայելով որ կատարեալ նմանութիւն կայ այն հացի մէջ, որ Աբրահամը թխել տուեց կաղաղորելու համար Տիրոջը, երբ նա այցելեց նրան իւր վրանում, Մամբրէի կաղնու տակ, (Ծննդոց XVIII. 1—3) և այն առաջաւոր հացերի մէջ, որ պահում էին բեմի վրայ և ժամանակ առ ժամանակ փոխարինում թարմ ու տաք հացերով (Սամուէլ XXI. 6). պարզ նկատելի է նմանութիւնը, և թէպէտ Երբայեցիների պատմութեան վերջում զոհաբերութիւնների նախնական և կուպիտ իմաստը մթազուտուած է, և նախնական տեսութիւնը հետզհետէ զեղծուած, սակայն և այնպէս՝ ձեռք յարատեւ է:

Անգլիական եկեղեցին ղեռ մինչև այժմ էլ պահպանել է այս խօսքերը. «Ընդունիր իմ սուրճն ու զոհաբերութիւնը»: Ղիկտորիա Թագուհին իւր Թագադրութեան միջոցին արքեպիսկոպոսի ձեռքով նուիրաբերեց բեմի վրայ շահանի մի ոսկեհուռ ծածկոց, և ոսկու մի ձոյլ, մի սուր, յետոյ հաց և գինի հաղորդութեան համար. ապա մի քսակ ոսկի, արտասանելով աղօթքի այս խօսքերը. «Ընդունիր այս զոհաբերութիւնը»:

Հայերիս մէջ երբ խաղողը առաջին անգամ (սովորաբար Աստուածածնի վերափոխման տօնին) քաղում են, նուէր են ուղարկում բարեկամներին, տանուէրին, պաշտօնական անձերին, քահանային, տանում են եկեղեցի՝ օրհնելու և հետեւալ օրը՝ մեռելոցին զերեզմանատուն:

Շիրակում և այլ շատ հայաբնակ գիւղերում առաջին կալը հանելիս՝ այս ցորենի ալիւրից հաց են թխում, որ կոչւում է «չալաքի» կամ «տապլայ» և նուէր ուղարկում բարեկամներին, տանուէրին, քահանային, նաև առաւօտ շատ վաղ բաժանում պատահողներին՝ իբր ննջեցեալների բաժին:

Վաղահասակ տանձ ու խնձորը առաջին անգամ քաղելիս՝

նուէր են ուղարկում բարեկամներին՝ մասնաւորապէս փեսին, տանուտէրին, քահանային և վարդավառի մեռելոցին տանում են գերեզմանատուն և պարկով կամ մի սկուտեղով դնում են գերեզմանաքարի վրայ. անց ու դարձ անողներն անխտիր վերցնում են ուտում և ննջեցեալին ողորմի տալիս:

Մեղրը կտրելիս բաժին են հանում բարեկամներին, տանուտէրին, քահանային, մեղրամոմից մոմ են թափում, տանում գերեզմանատուն և եկեղեցի՝ վառում:

Նորածին գառը կամ հորթը նուիրում են բարեկամներին, տանուտէրին կամ այլ պաշտօնական անձերի, մատղում են եկեղեցում և կամ մորթում և հոգու հաց պատրաստում:

Նոր պատրաստած մաճառից նուէր են ուղարկում բարեկամներին, տանուտէրին կամ պաշտօնական անձերի, եկեղեցի՝ հաղորդութեան բաժակի համար, և մեռելոցին՝ տանում են գերեզմանատուն, փոքր խնչ ածում գերեզմանաքարի վրայ և ողորմաթաս խմում:

Վերոյիշեալ փաստերը, որ նկատելի են աշխարհի բոլոր երկրներումն էլ, ապացուցանում են, որ զոհաբերութիւններն սկզբրունքով ընծաներ են, բառիս գրական իմաստով, կենդանիներ ընծայում են թագաւորներին, մորթում են գերեզմանների վրայ, զոհում տաճարներում. եփած կերակրներ ընծայում են զօրապետներին, դնում գերեզմանի և տաճարի սեղանի վրայ. պտուղների երախայրիքն ընծայում են կենդանի զօրապետներին, խնչպէս նաև մեռած զօրապետներին և աստուածներին. մի տեղ զարեշուր, մի ուրիշ տեղ՝ գինի, մի երրորդ տեղ chica ուղարկում են տեսանելի պետին, մատուցանում աներևոյթ ոգուն, և զոհաբերում աստծուն: Ուունկը, որ հնումը ծխում էին թագաւորների և մի քանի տեղերում բարձրաստիճան անձերի առջև, այլ տեղ ծխում են աստուածների առջև: Աւելացնենք նաև, որ թէ ուտեստի, և թէ ամէն տեսակի թանգագին իրեր, որոնք ծառայում են բարեհաճութիւն հայցելու՝ կուտակւում են խնչպէս թագաւորների զանձարաններում, այնպէս և աստուածների տաճարներում:

Մի անհրաժեշտ նկատողութիւն ևս. տեսանք որ սկզբում տեսանելի պետին մատուցուած ընծաներն սկզբրունքով մի միջոց էին համարւում նրա բարեհաճութիւնը գրաւելու՝ իրենց ներքին արժէքի պատճառով, բայց յետոյ այս ընծաները նոյն բարեհաճ ազդեցութիւնն էին կատարում իբր արտայայտութիւն նուիրատուի անձնուիրութեան:

Այսպէս և այն ընծաները, որ մատուցանւում էին անտեսա-

նելի պետին, գնահատուում էին սկզբում իրենց անմիջական օգտակարութեամբ, իսկ յետոյ որպէս նշանակ հնազանդութեան, և այս վերջին նշանակութիւնն է, որ զոհաբերութեան տալիս է այն ծիսական բնոյթը, որի մնացորդները կարելի է նկատել և այժմ:

ԻԶ.— Այժմ մենք հասնում ենք հետեւեալ նշանաւոր եզրակացութեան: Ինչպէս որ աշխարհային պետին մատուցուած ընծաները հետզհետէ զարգանալով ստանում են պետական եկամտի ձև, այնպէս և աստուածներին մատուցուած ընծաները զարգանալով ստանում են եկեղեցական եկամտի ձև:

Դիմենք քաղաքակրթութեան այն նախնական աստիճանին, երբ դեռ ևս գոյութիւն չէ ունեցել եկեղեցական որևէ կազմակերպութիւն: Այդ շրջանում, գերբնական էակին մատուցուած ընծան յաճախ բաժանուում է նրա և հայցող անձի միջև, և այս դէպքում, միասին ճաշելը հաստատում է նրա և պաշտողի միջև մի կապ՝ որ նրանց միացնում է:

Գիտենք, որ հնումը տիրում էր այն նախնական դադափարը, թէ ամեն մի բանի բնոյթ անբաժան լինելով իւր մասերից, նրանից ուտողներն ստանում են նրա բնոյթը, հետևապէս և միևնոյն բանից ուտողներն ստանում են միևնոյն յատկութիւնները, որոնք և կապ են հաստատում սրանց մէջ: Այս այն հաւատքն է, որ սկիզբն է տալիս եղբայրանալու սովորութեան՝ միմեանց արիւն խմելով, առաջ է բերում թաղման ծէսերի մէջ արիւն մատուցանելու սովորութիւնը և հաստատում է փոխադարձ կապ՝ միևնոյն ճաշին մասնակցելով, և այս հաւատը պատճառ է լինում, որ ոգուն կամ աստծուն մատուցուած կերակրի մի մասը իրենք մատուցանողներն ուտեն: Մի քանի երկրներում զոհին մասնակցում է ամբողջ ժողովուրդը, մի այլ տեղ՝ միայն կախարդները և կամ քրմերը, մի երրորդ տեղում՝ երկրորդ ձևը սովորական է, իսկ առաջինը պատահական, ինչպէս օր. Մեքսիկայում, Վուլբ սեղանին մասնակցողները պէտք է ծառայեն աստծուն հետեւեալ ամբողջ տարուայ ընթացքում:

Հայերիս մէջ շատ սովորական երևոյթ է մասնաւոր և հասարակական մատաղը: Փոքրիշատէ լուրջ հիւանդութեան կամ դժբախտութեան դէպքում հայերը վերցնում են մի քաղաղ և կամ մի դառ, մի ոչխար՝ և տանում եկեղեցու կամ ուխտատեղու դռան առաջ մատողում, միքանի տեղերում, ինչպէս Էջմիածնի գաւառում, արիւնը հոսեցնում են եկեղեցու դռան շէմքի վրայ: Մատաղն ուտելու հաւաքում են գլխաւորապէս ազգականներն ու բարեկամները և պատահական միքանի աղքատ:

Հասարակական մատաղ անելիս ընտրւում են միջանի մարդիկ, որ ժողովարարութիւն են անում, հաւաքում են թէ ալիւր և թէ դրամ, յետոյ գնում են այդ դրամով միջանի ոչխար կամ հոգ, ալիւրից թխում են հաց, մի որևէ ուխտատեղում, բացօդեայ պատրաստում են մատաղը և ամբողջ գիւղի տղամարդիկ և երեւմե նաև կանայք առանձին խմբերով նստած ուտում են՝ իրենց գլուխ ունենալով քահանային և տանուտէրին, որից յետոյ հոգեհանգիստ կամ մաղթանք և կամ անդաստան են կատարում: Նախ քան մատաղացուն մորթելը՝ նրան քահանայի օրհնած աղ են տալիս:

Այժմ անհրաժեշտ է նկատել, թէ ինչպէս ընծաների այդ տեսակ դործածութիւնից յառաջանում է կղերական դասի ապրուստի միջոցը: Կուկիսները մէջ քուրմը, կամենալով խաղաղացնել բարկացած աստծուն, որ մէկին վնաս է հասցրել, վերցնում է, օրինակ, մի թռչուն, որին քրմի խօսքերով աստուած ցանկանում էր տիրել, թափում նրա արեւնը գետին իբր զոհ, միաժամանակ արտասանելով մի աղօթք, չապա հանդիսաւոր կերպով նստում է, խորովում և ուտում թռչունը, անպէտք մասերը ձգում մացառուտը և վերադառնում տուն: Միևնոյն ձևով բառատասները Մուսատրա կղզում աստուածներին զոհ են բերում ձիեր, գոմէշներ, այծեր, խոզեր, թռչուններ և ամենայն տեսակ կենդանիներ, որ այն օրը կախարդը տրամադիր կը լինի ուտելու: Նաև կարող է ենք, որ Հնդկաստանում, Բուստար ժողովրդի մէջ, ռամեն մի նոր եկած անձն պարտաւոր է երկրպագել Կոջօ Պէնու աստծուն քարերի մի փոքրիկ կոյտի առջև, և զոհ բերի նրան թռչուններ, ձուեր, հացահատիկներ, և մի քանի պղնձէ դրամ, այս բոլորը յետոյ դառնում են նրան ծառայող քրմի սեպհականութիւն: Աֆրիկայի ակելի քաղաքակրթութեան հասարակութիւնների մէջ պատահում են միևնոյն տեսակի դէպքեր: Դադումէում ընա՝ որ պարտաւոր է հոգալ ոգիների մասին, կանոնաւոր, որոշ ուժիկ չի ստանում, այլ ապրում է ուխտաւորների նուէրներով: Քնրանց տաճարներում բարեպաշտ մարդիկ ամէն օր նուէրներ են ձգում, որ սեպհականացնում են քրմերը: Միևնոյնը տեղի է ունենում և ադանդների մէջ, Վերմերի եկամուտը կախուած է ժողովրդի առատաձեռնութիւնից, կոքերին մատուցուած զոհի կէսը պատկանում է քրմերին: Միևնոյնը և Պօլինեզիայում: Էլլիսը նկարագրելով տայիտեան բժիշկներին ասում է, թէ նրանք համարեա միշտ և՛ քրմերի դեր են կատարում, ու դեռ բժշկութիւնը չսկսած՝ ստանում են վճար, որի մի մասը աստուածներին բաժին է համարւում: Միևնոյնը տեսնում ենք

նաև Ամերիկայի հին Թազաուրութիւններէ մէջ, Առաջ բերենք հետևեալ հատուածը Օվիէդօի խօսակցութիւնից:

Վանականը.— Ընծայում էք որևէ բան ձեր տաճարին:

Հնդիկը.— Ամեն մարդ բերում է իւր տնից ինչ որ ցանկանում է նուիրել, օրինակ թռչուն, ձուկ, սիմինդր, կամ մի ուրիշ բան, ծառայողները վերցնում են և տանում, պահում տաճարում:

Վանականը.— Ո՞վ է գործածում նուիրուած իրերը:

Հնդիկը.— Տաճարի հայրն է ուտում, իսկ ինչ աւելանում է, ուտում են ծառայողները:

Պերուում, ուր մեռեալների պաշտամունքը կազմում էր կենդանիների գլխաւոր զբաղմունքը, բազմաթիւ աստուածներին և ոգիներին մատուցուած ընծաներից գոյացել էր մի ահագին եկեղեցական հարստութիւն, որով ապրում էին ամեն տեսակի քրմեր: Միևնոյն երևոյթը տեսնում ենք նաև պատմական հին ժողովուրդների մէջ: Յոյների մէջ զոհաբերութեան մնացորդները տրւում էին քրմերին, իբր վարձատրութիւն նրանց պաշտօն մատուցանելուն և աստուածների բոլոր ծառայողները պահւում էին զոհաբերութիւնների և բարեպաշտական նուիրաբերութիւնների հաշուի: Միևնոյնը կատարւում էր և հրէաների մէջ, Ղևտացոց գրքում (II. 10) կարդում ենք. «Եւ որ մնայցէ ի զոհէ անտի, Ահարոնի և որդւոց նորա լինեցի» (որոնք նշանակուած էին քահանայի պաշտօն կատարելու):

Աստուածաշնչի մի ուրիշ տեղում ասուած է, որ քահանաներին իրաւունք է տրուած վերցնելու զոհի մորթին և եփուած ու խորոված ամէն տեսակի նուէրները: (Ղևտ. գ. VII. 8. 9. 16). Միևնոյն երևոյթը ներկայացնում է մեզ և քրիստոնէութեան առաջին տարիներում այն *deposita pietatis* որ յիշում է Տէրտուլեանը, և որ միանգամայն պարզ նուէրներ են եղել: Յետագայում «Կղերը կարիք է զգացել աւելի որոշ եկամտի, սակայն հաւատացեալները շարունակել են միայն նուէրներ տալ: Այս նուէրները (այսինքն, այն բոլորը, ինչ որ բարեպաշտ քրիստոնեաները նուիրում էին Աստծուն և եկեղեցուն), որ սկզբում կամաւոր էին, յետոյ սովորութիւնը նուիրական օրէնք դարձրեց: Միջին դարերը ներկայացնում են ընծայաբերութեան զարգացման մի նոր աստիճան. քահանաների և աշխարհական անձերի հազորդութեան համար անհրաժեշտ եղածից դատ, չը հաշուած նաև նշխարքի համար յատկացրուածը, սովորութիւն կար մատուցանել նաև ամեն տեսակ նուէրներ, որոնք վերջին ժամանակներում մինչև անգամ եկեղեցի էլ չէին տարւում, այլ ուղղակի ուղարկւում էին առաջնորդարան: Յետոյ, այսպիսի նուէրների յաճախակի կրկնուե-

լու և տարածուելու պատճառով, նուէրներէ, որոնք մինչև անգամ ստացել էին Աստուծոյ, բայց էապէս եկեղեցուն, կտակելու ձե, սկսեցին ծագել եկեղեցական կանոնաւոր եկամուտներ:

Հայերիս մէջ ևս եկեղեցու և նրա պաշտօնեաների եկամուտները միննոյն ձևով են յառաջացել— Սկզբում ուխտաւորները յօժարակամ հրաւիրել են եկեղեցու պաշտօնեաներին ևս ճաշակելու իրենց հետ մատաղը, սակայն յետոյ հետզհետ պարտաւորուել են որոշ բաժին հանել թէ եկեղեցուն և թէ նրա պաշտօնեաներին, այսպէս՝ այժմ ամեն մի մատաղ անող պարտաւոր է մատաղացուի մորթին տալ եկեղեցուն, աջ ոտը (էրին) քահանային, զըլուխը և ստամոքսը՝ ժամհարին:

Իբր երախայրիք ցորենից, ալիւրից, իւղից, պանրից, կարագից, ձէթից, խաղողից և գինուց թէ բարեկամներին և թէ եկեղեցուն ու նրա պաշտօնեաներին մատուցած ազատ նուիրարեւորութիւնից հետզհետէ ծագել են հետևեալ եկեղեցական տուրքերը:

Պտղի.— Յօգուտ էջմիածնի ամբողջ Ռուսահայաստանում հաւաքուած է ցորեն՝ կալոցի ժամանակ, տնից մէկ փութ, իսկ Ադրբայժանարայ կաթողիկոսութեան վիճակում տնից $\frac{1}{2}$ չափ (մօտ կէս փութ) յօգուտ Աղթամարի ս. Խաչ վանքի: Վերջինիս վիճակում այս տուրքը վճարում են միայն գողովինք—անկողին—ունեցողները, այսինքն ամուսնացած անձինք, որոնք ազատուած էին այս տուրքից միայն այն ժամանակ, երբ այլևս պտղելու, այսինքն որդեծնութեան վիճակի մէջ չէին լինում: Երբ մինը մերժում էր այս տուրքը՝ հաւաքող հոգեւորականը անիծում էր՝ ասելով. «Չպտղիս»:

Այս տուրքը հաւաքելու համար գնում են վարդապետներ և գործակալ քահանաներ, որոնք նաև քարոզում են եկեղեցիներում: Սրանց ևս իբր նուէր տրւում է միջանի փութ ցորեն, որ կոչւում է զաւազանապտուղ, այսինքն զաւազանը ձեռին բռնած քարոզող հոգեւորականի կամ զաւազան, իշխանութիւն ունեցողի պտուղ:

Միննոյն կալոցի միջոցին ծխատէր քահանան ևս ժամկոչի հետ գնում օրհնում է իւր ծխերի կալերը և նուէր ստանում մօտաւորապէս մի փութ ցորեն և $\frac{1}{2}$ փ. գարի, որ կալապտուղ է կոչւում. իսկ ժամկոչը մօտ $\frac{1}{4}$ փութ կամ մի ուղպիկ ցորեն: Քաղաքներում և մեծ աւաններում ժամկոչները այս ցորենի տուրքի փոխարէն ամեն շաբաթ օր ման են գալիս աները մի մեծ կողով շալակած և ըղաւում. «Ժամկոչի հաց, խանում մարիկ»: Ամեն մի $\frac{1}{2}$ մի ամբողջ հաց բերում տալիս էին: Այս սովորութիւնը

ևս վերացել է, սակայն միջանի տեղեր՝ ինչպէս Հին Նախիջևանում, Կաղզվանում, Վանում, յարատեւել է նոյն սովորութիւնը միայն մեծ պասի եօթ շաբաթներէ ընթացքում: Ամեն մի տուն ինքնաբերաբար շաբաթական մի հաց տանում է եկեղեցի և տալիս ժամկոչին, իսկ եթէ մինը զլանում է՝ ժամկոչը գնում է նրա տունը՝ և պահանջում: Այս սուրբը կոչւում է «եօթնահաց»: Ջաւախքում մի հին սովորութիւն ևս մնացել է. քաւորը պարտաւոր է թագուորին մի զոյգ եամանի պարգեւի, իսկ սա իւր հին չուստերը պարտաւոր է ժամկոչին նուիրել^{*)}:

Պանիր.— Գարնանը՝ Համբարձումից յետոյ գործակալները ցրում են գիւղերը և ոչխարների մի օրուայ կաթը հաւաքում, պանիր պատրաստում և ուղարկում էջմիածին. նոյնը անում են և Աղթամարի կաթուղիկոսութեան շրջանում:

Դուլ. Աշնանը դարձեալ գործակալները ցրում են գիւղերը և ամեն մի տանից 1— $\frac{1}{2}$ ֆունտ իւղ հաւաքում յօգուտ Մայր աթոռի: Նոյնը անում են և Աղթամարի շրջանում, սակայն այստեղ միաժամանակ հաւաքում են նաև մի մի զոյգ գուլպա Աղթամարի միաբանների համար:

Ձէթ եւ կանեփ.— Աղթամարի կաթուղիկոսութեան շրջանում մեծ պասին հաւաքում էին իրր տուրք ձէթ, կանեփ և բամբակ, յօգուտ եկեղեցու: Ձէթը և բամբակը գործ էին անում կանթեղների մէջ, իսկ կանեփից թոկ էին պատրաստում թէ կանթեղները կախելու և թէ վանքի նաւակների վրայ գործածելու:

Գինի.— Իւրաքանչիւր հնձանի տէր նոր գինի ստանալիս ոչ միայն բաժին է հանում իւր բարեկամներին, քահանային և տանուտէրին, այլ և մի երկու դաւ տանում է եկեղեցի՝ իրր բաժկի, այսինքն պատարագի ժամանակ հաղորդութեան համար գործածելու: Հին եկեղեցիներէից շատերի կողքերին թաղուած են կարասներ, ուր լցնում, պահում էին այդ գինիները: Շատ տեղերում երբ սկսում են գինի քաշել, քահանան գնում օրհնում է հնձանը, և իրր վարձատրութիւն խաղող ստանում:

Ալիւր.— Առաջին անգամ նոր ցորենը ազալիս՝ մի քիչ տալիւր ուղարկում են եկեղեցի՝ որ պահեն, նշխարք գործելու:

Դժողո՞ղ.— Աստուածածնի վերափութման տօնին ամէն մի այգեատէր 5—10 ֆունտ խաղող է տանում եկեղեցի, որի մի մասը օրհնում են և բաժանում ժամաւորներին, մնացածը տալիս քահանաներին և ժամկոչին:

Կարագ.— Աւագ հինգշաբթի օրը, ոտնլուայի ժամանակ,

*) Տես Ե. Լալայեանի Ջաւախք. եր. 145.

ամէն մի տնից մի խիար, այսինքն խիարի, վարունկի, մեծութեան և ձևի կարագ տանում են եկեղեցի և տալիս քահանային: Սրա մի ջնջին մասը քահանան օրհնում է և բաժանում ժողովրդին, իսկ մնացածը իւրացնում:

Հաւ.— Աղթամարի կաթողիկոսութեան շրջանում սովորութիւն է եղել, որ աշնանը յօգուտ Աղթամարի ամէն մի տնից 1—2 վառեկ են հաւաքել իրր տուրք:

Ջատկին և Ս. Պաշին ընդհանրացած սովորութեան համեմատ Աղթամարի կաթողիկոսին նուէր էին տանում գառ, ձու, թխածքներ, շաքար, տապակած հաւ. շատերն էլ աջամբոյր էին տալիս:

Հոգեբաժին եւ կողոպուտ.— Հնումը իւրաքանչիւր վանք տարեկան մի կամ երկու անգամ մի կամ երկու հոգեորական ուղարկում էր իւր թեմի գիւղերը՝ նոյն տարում վախճանուածների աղգականներից հաւաքելու իրր հոգեբաժին գառ, ոչխար, տաւար և կամ դրամ, և իրր կողոպուտ՝ ննջեցեալի անկողինը և հանդերձը: Այժմ այս ալլես տեղի չի ունենում, ալլ՝ սրա փոխարէն ննջեցեալի տարելիցին մի բուրլի և կամ աւելի պահանջում են յօգուտ եկեղեցու՝ իրր հոգեբաժին: Սակայն դեռ ևս շատ տեղերում ննջեցեալի դագաղի երեսքաշը, անկողինը և շորերը տալիս են քահանային, շապիկն ու վարտիկը՝ ժամկոչին:

Կովի և գոմէշի առջինեկ հորթը սովորաբար նուիրել են և նուիրում են եկեղեցուն:

Ինչ.— Մինչև այժմ մենք խօսում էինք այն ընծաների մասին, որ մատուցանում էին հասարակական ստոր դիրք ունեցող անձերը՝ գրաւելու իրենց մեծերի շնորհը. բայց ոչինչ չենք ասել այն պարզների մասին, որ անում են բարձրաստիճան անձեր՝ իրենց ստորագրեալներին: Այս երկու տեսակի ընծաների նշանակութեան տարբերութիւնը բացայայտ կերպով երևան է գալիս այն երկրներում, ուր ընծաներ մատուցանելու սովորութիւնը բաւական բարդ է, ինչպէս օր. Չինաստանում: Ճյգելութիւնների ժամանակ, որ անում են միմեանց կառավարիչները և սրանց ստորագրեալները, կամ այս այցելութիւններից յետոյ, տեղի է ունենում և ընծաների փոխանակութիւն. սակայն կառավարչի արածները կոչւում են պարգև, իսկ ստորագրուածինը՝ ընծայ. այսպիսի բառերով են արտայայտում չինացիները և այն ընծաները, որ փոխանակում է իրենց կայսրը օտար պետութիւնների հետ: Պէտք է մի քանի խօսք էլ ասել այս ընծաների մասին, թէպէտ դրանք ծիսական կարգերի բնոյթ չունին:

Ժամանակի ընթացքում քաղաքական պետի իշխանութիւնն աւելի և աւելի զօրեղանալով, տիրապետում է ամբողջ հասարակական գոյքին, սակայն՝ հասնում է մի ժամանակ, երբ նա ստիպուած է զգուշ իրեն այդ մենաշնորհուած գոյքի մի մասը զիջել իւր ծառաներին ու հպատակներին: Ծառաներն ու հպատակները, որ սկզբում հպատակւում էին ընծաներ տալու պարտականութեամբ, այժմ հպատակւում են մասամբ նրանից ստացած պարգևների ուժով: Այնպիսի ժողովուրդները վերաբերմամբ, ինչպէս օր. կուկիսներն են, որոնց մասին կարելի է ասել, թէ սրանց մէջ ոչ ոք առանց ռաջահի թոյլտուութեան ոչ մի բանի չի տիրում, կամ տահմեցիկները, որ իրենք անձամբ, իրենց բոլոր ունեցուածքով կազմում են իրենց պետի կատարեալ սեպականութիւնը, այս ժողովուրդները գտնւում են այնպիսի մի դրութեան մէջ, որ ամբողջ սեպականութիւնը մեծ քանակով կենտրոնանալով քաղաքական կենտրոնում, չի կարողանում գործադրուել կենտրոնում, ուստիս պէտք է զգացուում վերադարձնելու ժողովրդին:

Սրանից յառաջանում է այն, որ թէպէտ Դանոմէում, օրինակ, պետական անձերը ռոճիկ չեն ստանում, սակայն թագաւորը բաժանում է նրանց, իւր միւնիստրներին և պաշտօնեաներին, պարգևներ: Բայց կարիք չկայ այդքան հեռու գնալ ապացոյցներ բերելու: Բաւական է մատնանշել, որ պատեհադի և հետեանքի այս յարաբերութիւնը գոյութիւն է ունեցել և հին Եւրոպայում: Ահա թէ ինչ է ասում Տակիտոսը հին գերմանացիների մասին. «Զօրապետը պարտաւոր է ցոյց տալ իւր առատաձեռնութիւնը, նրա հետեւորդներն այդ ակնկալում են: Մի օր նրանք խնդրում են պատերազմական ձի, մի ուրիշ օր թշնամու արիւնով ներկուած մի նիզակ: Զօրապետի սեղանը, որքան և ինչ համադամ, պէտք է առատ լինի, այս միակ վարձատրութիւնն է նրա հետեւորդների, այսինքն, որ մի իշխանութիւն, որ ամեն ինչ իւր մենաշնորհն է դարձրել, վերջ ի վերջոյ ստիպուած է լինում պարգևներ և նուէրներ բաժանելու իւր հպատակներին: Միջին դարերը Ֆրանսիայում ընդորոշում են միևնոյն սխտեմի առաջ գալով, միայն փոքր ինչ փոխուած ձևով: XIII դարում թագաւորը ցանկանալով որ արեան իշխանները, թագաւորական ամբողջ տունը, թագի բարձր պաշտօնեաները և դրան բոլոր անձերն արտաքինով համապատասխանէին իրենց արժանաւորութեան, բաժանում էր նրանց հանդերձներ, դիրքի և տարուայ եղանակի համեմատ՝ երբ տեղի էին ունենում հանդիսաւոր ընդունելութիւնները: Այս հանգերձները կոչւում էին livrées, որովհետև տրւում էին իբր թագաւորական կամաւոր պարգևներ. իսկ այս ակնյայտի կերպով

ցոյց է տալիս, որ այդպիսի պարզեւ ընդունելը նշանակում էր յայտնել հպատակութիւն:

Հաղիւ թէ կարեւոր լինի աւելացնել, որ եւրոպական քաղաքակրթութեան բոլոր աստիճաններում այն սովորութիւնը, որի համեմատ թագաւորները, դուքսերը և ազնուականները ժողովրդին դրամներ էին ձգում (largesse), համապատասխանում է այն ստրկական դրութեան, որի ժամանակ այն վարձատրութիւնը, որ ստորադրուածները պիտի ստանային իրենց աշխատանքի փոխարէն օրական պարէնի հետ, ստանում էր աւելի պարզիւ ձև, քան աշխատանքի վարձի: Դեռ այս քիչ է, նոյն իսկ այժմ, մեր ժամանակներում, ծառաներին տրուող պարգևները, աօնների նուէրները ներկայացնում են մնացորդ այն հին սխտանի, երբ վարձատրութեան պակասը լրացնում էին պարգևներով, մի սխտան, որ ինքն էլ մնացորդ է հանդիսանում մի ուրիշ, աւելի հին սխտանի, երբ պարգևները ծառայում էին որպէս վարձատրութեան միակ միջոց:

Այստեղից պարզ է, որ այն միջոցին, երբ ստորադրուած մարդկանց մատուցած ընծաներից հետզհետէ առաջ է գալիս հարկ, տուրք և մաքս, կառավարիչների տուած պարգևներից էլ յառաջանում է ռոճիկ:

Հայոց մէջ թագաւորներն ու նախարարները սովորութիւն են ունեցել իրենց իշխանների ծառայութիւնը վարձատրելու նպատակով պարգևել նրանց գիւղեր, աւաններ և նոյն իսկ գաւառներ, որոնք կոչուել են «պարգևականք», տարբերուելու համար «հայրենիք» կոչուող հողերից, որոնք կազմել են ծառանդական սեպականութիւն, մինչդեռ «պարգևականքը» հարկերից ցմաւ օգտուելու արտօնութիւնն է միայն ունեցել: *)

Զինուորական ծառայութեան համար ոչ զինուորները և ոչ էլ զօրապետները ռոճիկ չեն ստացել, այլ միայն աւարից պարգևատրուել են: Միեթար Գոշի Դատաստանագրքում շատ սովորութեան» որոշուած է, որ աւարի կէսը զօրքին պիտի տրուի, և եթէ զօրական ի պատերազմի զոք ըմբռնեալ զգեստն և երկվարն և զէնքն ամենայն նորա լիցին, այլ զրահ տեառնն լիցի, պղինձ և երկաթ և նմանք նոցա՝ զօրացն: Ոսկի, ակունք և զիպակ ամենայն օրինակաւ թագաւորի լիցի, և ասրեղէն պատուական և կտաւ-իշխանաց, և անարգ ասրեղէն և կտաւեղէն՝ զօրացն: **)

Հայ մելիքների տիրապետութեան ժամանակ ևս, ոչ զօրքը

*) Համեմատ Адонцъ; Армения въ эпоху Юстиніана. Կր. 458.

**) Միեթար Գոշի Դատաստանագրք. Մասն Բ. Ա.

և ի՛նչ էլ նրանց հարիւրապետները (իւզբաշի) ռոճիկ չեն ստացել, և մեկի՞ք հարկադրուած է եղել բաժանել նրանց աւարի մի մասը և տօներին զանազան խալաթներ, գլխաւորապէս հանգերձ, ձի, զէնք, նուիրել:

Թէ թագաւորների, թէ նախարարների և թէ մելիքների սեղանը միշտ բաց է եղել եկող գնացողի, ծառայողների առաջ: Փաւստոս Բիւզանդն ասում է. «Եւ այլ յայսմ ազգաց և ի խոնարհ՝ որ գործակալս անուն բարձիւք առաջի արքային պատիւ ի գլուխ բազմէին, թող զնահապետս մեծամեծս և զտանուտեարս որք գործակալք միայն էին ինն հարիւր բարձ, որ մտանէր ի ժամ տաճարին ուրախութեանն բազմակալացն կարգելոց, թող զտունկայս գործակալութեանն սոլասուռ:»^{*)}

Այժմեան հասարակական միջանի հիմնարկութիւնների ծառայողներ էլ, ինչպէս՝ գզիրը, հասարակաց կշիռի կշռարարները, բաղանիսների նաթրները, ժամհարը, ռոճիկ չեն ստանում, այլ միայն շատանում են պարգևներով. այսպէս՝ գզիրին պարգևում են նոր տարուն մի քանի կոպէկ և զատկին միքանի ձու: Նաև կալոցին $\frac{1}{2}$ —1 փութ ցարեն: այս վերջինս արդէն պարտադիր է դարձել:

Թէ Կարնում և թէ այստեղից դադրած աղէքսանդրապոլցիների, ախալցխացիների և ախալքալաքցիների մէջ սովորութիւն է, որ բաղնիսում ծառայող կանայք, նաթրները, նոր—տարուն շրջում են իրենց բաղանիսը այցելողների տները, հիւրասիրում և մի մի ափսէ չոր միւրգ և 10—50—սկան կոպէկ դրամ նուէր են ստանում: Երբ նորահարսը առաջին անգամ գնում է բաղանիս՝ նաթրները լողացնելուց յետոյ բաղանիսի թասերը միմեանց խփելով՝ հանդիսաւոր կերպով հանում են բաղանիսից՝ և մինը մի թասով ջուր է մատուցանում: Նորահարսը պարտաւոր է ջրից միքիչ խմել և թասի մէջ դրամ ձգել՝ իբր պարգև նաթրներին:

Հասարակաց կշռի կշռարարները իրենց կշռած մրգերից, ուտելիքներից մի մի քիչ վերցնում են:

Ի՛նչ.— Մի քանի խօսք էլ պէտք է ասել այն նուէրների մասին, որ անում են այն անձերը, որ միմեանց վերաբերմամբ իշխանաւորի և ստորադրեալի դրութեան մէջ չեն զտնւում:

Այսպիսի նուէրների ուտումնասիրութիւնը մեզ ստիպում է վերադառնալ ընծայաբերութեան նախնական ձևին, որ տեղի է

*) Փ. Բիւզանդ Դ. գլք. Գ. Բ. յիշումս Азониъ Арменія въ эпоху Юстиніана С.-Пб. кр. 239.

ունենում միմեանց օտար հասարակութիւնների անդամներէ մէջ: Այս փաստերից մի քանիսի ուսումնասիրութիւնը ծագեցնում է մի շատ հետաքրքրական հարց. արդեօք խաղաղարար ընծաները, որ մատուցում էին այդպիսի հանդամանքներում, սկիզբ չէն տալիս հասարակական մի ուրիշ նշանաւոր երևոյթի: Փոխանակութիւնը, հակառակ տիրապետող կարծիքին, բոլոր ժողովրդներին հասկանալի չէ եղել. կուկը, նկարագրելով այն անյաջողութիւնը, որին ենթարկուել էր ցանկանալով փոխանակել մի քանի իր աւատարալիացիներէ հետ, հետեւեալ նկատողութիւնն է անում. «Տեսնո՞ք ոչ մի գաղափար չունին առետրի մասին»: Ուրիշ ճանապարհորդների տուած տեղեկութիւններից կարելի է եզրակացնել, որ փոխանակութեան սկզբնաւորութեան ժամանակ շատ ազատ հասկացողութիւն է տիրել փոխանակող իրերի փոխադարձ արժէքի մասին: Բէլլը խօսելով օստեակների մասին, որ մատակարարել էին իրեն առատութեամբ ձուկ և թռչուններ՝ նկատում է. «Տուէ՞ք նրանց փոքր ինչ ծխախոտ և մի բաժակ օղի, և նրանք ձեզանից այլ ևս ոչինչ չեն խնդրել, որովհետև զբամի գործածութեան մասին ոչ մի գաղափար չունին»: Յիշելով որ սկզբում գոյութիւն չէ ունեցել արժէքի ոչ մի չափ, և որ արժէքի հաւասարակշռութեան գաղափարը մշակուել է երկար փորձերի շնորհիւ, անհնարին չպէտք է համարենք այն ենթադրութիւնը, թէ փոխանակութիւնը ծագել է միմեանց բարեհաճութիւնն ընծաներով գրաւելու սովորութիւնից, Հետզհետէ և փոքր առ փոքր սկսել է տիրել այն կարծիքը, թէ տրուելիք ընծան պէտք է հաւասարարժէք լինի ստացածին. միևնոյն ժամանակ և փոխանակուող իրերը սկսել են կորցնել ընծայի բնոյթը: Եւ յիշաւի, դժուար չէ եւրոպացի ճանապարհորդների տեղացի զօրապետներին տուած ընծաների պատմութիւնների մէջ նկատել այն կապը, որ կայ փոխանակութեան և փոխադարձ ընծայաբերութեան միջև: Այսպէս, օրինակ, Մունկո-Պարկը գրում է հետեւեալը. «Սա նուիրեցի Մանդա-կուսոսանին (Իլիֆոնտի զօրապետին) մի քիչ յամբար, բիւստ, և մի քանի կարմիր կտոր, որից նա, ըստ երևոյթին շատ զո՞հ մնաց, և զրա փոխարէն ինձ ուղարկեց մի եզ: Այսպիսի վարձու՞քը միանգամայն ցոյց է տալիս նաև նախնական ընծաների նշանակութիւնը, որպէս բարեհաճութիւն գրաւող միջոցի, իսկ այն գաղափարը, թէ փոխադարձ ընծաները պէտք է մօտաւորապէս հաւասարարժէք լինեն՝ ենթադրել է տալիս, որ արդէն գոյութիւն ունի դեռ լիովին չը պարզուած փոխանակութիւն: Դեռ աւելի, Հիւսիսային Ամերիկայի հնդիկների սովորութիւնները ցոյց են տալիս, որ

բարեհաճութիւն գրաւող ընծաները կարող են յառաջ բերել փոխանակութեան մի միջոց. Կեալինը գրում է հետեւեալը. «Յիւուսները (Wampum) անփոխութեան կերպով պատրաստւում էին, և թանգ գնահատւում, որպէս փոխանակութեան միջոց, (գրաձեւերի փոխարէն, որոնց մասին հնդիկները գաղափար չունէին). Wampum-ի այս կամ այն քանակը որոշում էր ձիու, զէնքի, շորի և այլ բաների արժէքը: Դաշինք կապելիս Wampum-ից պատրաստուած գօտիներ փոխանակում էին ի նշան բարեկամութեան, և ժամանակ առ ժամանակ ուղարկում էին թշնամի ցեղերին՝ որպէս խաղաղութեան նշան, և կամ վճարում էին որոշ ձողաչափ երկարութեան իւր տուգանք յաղթող—թշնամունք»:

Մի կողմ թողնելով այս բոլոր տեսութիւնները, այժմ ուշադրութիւն դարձնենք այն բանի վրայ, թէ ինչպէս գթարար ընծաները դառնում են հասարակական ծէս: Ամերիկայում ընծան քանի դեռ պահպանում էր իր նախնական ձևը՝ որ նշանակում էր հաւատարմութիւն զօրապետին կամ թագաւորին, տարածւում էր, որպէս միջոց բարեկամութիւնը ապահովեցնելու: Իւզատանում հնդիկները մինին այցելելիս միշտ իրենց հետ ընծաներ են տանում այցելած մարդկանց արժանաւորութեան համեմատ. վերջիններս նոյնպէս փոխադարձաբար ընծաներ են տալիս: Նապոնիայում, ուր սաստիկ խիստ ձևականութիւն է տիրում, միկատոն պարբերաբար ստանում է ընծաներ, որ հաւատարմութեան նշան են համարւում, ստորադրուածներն էլ իրենց իշխանաւորների ընծաներ են տալիս. հաւասարների մէջ, երբ մինն առաջին անգամ այցելում է մինի տունը, պէտք է մի նուէր տայ տան տիրոջը, և վերջինս էլ վերադարձնելով այցելութիւնը նոյնարժէք մի նուէր է տալիս: Ուրիշ ժողովուրդների մէջ, հաւասարների այս փոխադարձ գթասիրութիւնը բոլորովին ուրիշ ձև է ստանում: Մարկտէմը Հիմալայան լեռների բնակիչների մասին գրում է, թէ շղթարկների փոխանակութիւնը այս լեռներում բարեկամութեան նշան է համարւում, ինչպէս որ հովիտներում փաթթոցների փոխանակութիւնը՝ զօրապետների մէջ: Սակայն Բոտանուսն է տեսնում ընծայաբերութիւնը խիստ ձևականութեան հասած, ուր ամեն դասակարգի և աստիճանի մարդկանց համար էական ձևականութիւնը կայանում է մի մետաքսէ շարֆ մատուցանելու մէջ: Մի ստորադրուած մօտենալով իւր մեծաւորին, ընծայում է մետաքսէ, սպիտակ շարֆ, և երբ հեռանում է մի այգլիսի շարֆ էլ ձգում է իւր վզին, ծայրերը առաջի կողմից կախ ձգուած: Հաւասարները պատահելիս՝ միմեանց դէմ սաստիկ կռուում են և փոխանակում շարֆերը: Ոչ մի տեսակցութիւն

տեղի չի ունենում, ուր շարժը դեր չը խաղար: Մինչև անգամ նամակների մէջ էլ են դնում և ուղարկում, հեռաւորութիւնը երբէք չի խանգարում:

Նւրոպայի պատմութիւնը բաւական որոշ ցոյց է տալիս, թէ ինչպէս ընծայաբերութիւնը, որ սկզբում ծէս է դառել կառավարչի ազդած երկիւղի ազդեցութեամբ, հետզհետէ աւելի և աւելի մեծ ծաւալ է ստանում ազդեցիկ և հզօր անձերի պատճառած երկիւղի շնորհիւ և ի վերջոյ ընդհանրանում է, հաւասարների տածած այն երկիւղի պատճառով, որ եթէ նրանց վրայ ուշադրութիւն չը դարձնեն, երբ ուրիշների բարեհաճութիւնն են հայցում, սրանք կարող են թշնամանալ:

Այստեղ շատ տեղի է յիշել Մովսէս Խորենացու հետեւալ վկայութիւնը Նրուանդ թագաւորի մասին. իսկ Նրուանդը առաւել ևս առատ պարզկներ էր տալիս և նորանից ամեն միևին փողեր էր բաժանում... Նւ այնչափ սիրելի չէր դարձնում նոցա, որոնց շատ էր տալիս, որքան թշնամի էր շինում նոցա, որոնց նոյնչափ առատութեամբ չէր տալիս:*)

Հռոմում նոր-տարուն բոլորը կամ ընծաներ էին տալիս և կամ ստանում: Թևարկեալները մատուցանում էին իրենց թևարկունքին, բոլոր հռոմէացիները մատուցանում էին Օգոստոսին: Սա նստում էր իւր տան մուտքի առջև, բոլոր քաղաքացիք անցնում էին նրա մօտով իրենց ձեռներում բռնած ընծաները, որ գնում էին այս երկրային աստծու ոտների մօտ: Կայսրը իւր հերթին, տալիս էր ամեն միևին նրա բերած ընծայի արժէքի համեմատ կամ փոքր ինչ աւելի մի գումար: Այս սովորութիւնը կռապաշտական կարգերի հետ կապ ունենալու պատճառով քրիստոնէութիւնից հալածուեց: 578 թւին Օկսէրի եկեղեցական ժողովը արգելեց նոր տարուն ընծաներ տալ, և սաստիկ պարսակեց այդ սովորութիւնը: Ի՞նչ Շարտրացին ասում է. Կան մարդիկ, որ տալիս են և ընդունում նոր տարուայ սատանայական ընծաներ: XII դարում Փարիզի արքեպիսկոպոս Մօրիսը քարոզել է այն չար մարդկանց դէմ, չորոնք հաւատում են ընծաների ազդեցութեան և ասում են, թէ նա, ով նոր տարու օրը ընծայ չի ստանալ՝ ամբողջ տարուայ ընթացքում չի հարստանալ: Բայց չը նայելով եկեղեցու արգելքներին, այս սովորութիւնը անցել է ամբողջ միջին դարերով մինչև մեր ժամանակը: Դեռ աւելի, այս սովորութեան հետ միաժամանակ զարգացել են և նման պարբերական ծէսեր, ինչպէս, օրինակ, Ֆրանսիայում, զատկին միմեանց ձու

*) Մովսէս Խորենացի. Բ. իս զլ. Թարգմ. Ստեփանէի:

ընծայելը՝ Վերջապէս այս ձևի ընծայաբերութեան սովորութիւնն ևս մեր արդէն ուսումնասիրած միւս տեսակի ընծաների՝ սովորութեան նման ենթարկուել է միատեսակ փոփոխութեան. սկզբում եղել են կամաւոր, յետոյ դարձել պարտադիր:

Հայերիս մէջ ևս շատ ընդունուած է հաւասարների միջև տեղի ունեցող նուիրաբերութիւնը: Համարեմք բոլոր նշանաւոր տօներին միմեանց ընծաներ են տալիս, մանաւանդ նոր խնամացող գերդաստանները, և այս ընծաներից միջանիւր այնքան պարտադիր են համարուում, որ երբեմն, նոյնիսկ խստիւ պահանջուում են: Մեզ մօտ ևս ընդհանրացած սովորութիւն է՝ որ նոր տարուն ծնողները զաւակներին, զաւակները ծնողներին և բարեկամները միմեանց պէտք է մի որևէ բանով «կազանդեն»: Զատիկին ևս կարմիր ձու միմեանց նուիրելը շատ ընդհանրացած է. նշանուած հրիտաւարդները յաճախ նշխում են ձուն, և նուիրում իրենց նշանածին.*) վարդերին վարդի փնջեր միմեանց նուիրելը շատ տեղեւորում կայ, նաև նշխած խնձոր հարսնացուներին նուիրելը: **)

Աւելի ուշագրաւ են նոր խնամիկների միջև փոխանակուող ընծաները, որ փայ կամ խոնչա են կոչւում և միանգամայն պարտադիր են համարուում, այնպէս որ եթէ պսակը վաղ է կատարուում, այնուամենայնիւ այդ փայերից մի քանի գլխաւորները պահանջուում են: Փայերը կամ խոնչաները փեսայացուի տնից ուղարկւում են հարսնացուի տունը բարեկենդանին, մեծ պսսի առաջին օրը, միջինքին, ծաղկաղարդին, զատիկին, վարդավառին, նաւասարդին: Փայերը բաղկանում են ուտելիեղէններից, խմիչքներից և զանազան դարդերից: Փայի փոխարէն հարսնացուի տնից ևս զանազան ուտելիեղէններ և խմիչք է ուղարկւում տղայի տունը, որ դարձուածք է կոչւում: Հարսնացուի տանից ուղարկուած ընծաների մէջ գրեթէ միշտ անպակաս է լինում զուլպան, որ ոչ

*) Ձուն նշխում են այսպէս. Սպիտակ ձուի վրայ մեղրամոմով նաշիւր, տառեր են չիւում, և ձգում ներկի մէջ. ապա ներկից հանում են, և մեղրամոմը պոկում. աճառով ձուն ներկուած է լինում, իսկ մեղրամոմի պատած տեղերը մուսկն սպիտակ: Կամ ներկած ձուն մեղրամոմով նաշիւրց յետոյ՝ ձգում են թանի մէջ: Ներկը թափւում է, բացի մեղրամոմի տակ եղածը, ապա հանում են և մեղրամոմը պոկում:

**) Խնձորը այսպէս են ներկում. Դեւ չհասած, չկարժած ժամանակ տանց ծառից քաղելու կայցնում են վերան զանազան նաշիւրով կամ անուան սկզբնատառով կարուած տերեւներ: Մրանց պատած տեղերը մուսկն սպիտակ, իսկ մնացած մասը կարմրում է:

միայն այս՝ այլ և ուրիշ շատ դէպքերում ընծայաբերութեան ամենայարմար առարկան է կազմում:

Ընտանեկան կեանքի մէջ ևս որոշ ընծաներ արդէն պարտադիր տուրքի ձև են ստացել, այսպէս՝ մէկի ծննդաբերութեան միջոցին մօտիկ ազգականները պարտաւոր են «ծննդաւաթ» ուղարկել, որ գլխաւորապէս բաղկանում է զանազան կերակրներից և խմորեղէններից: Փեսայացուի ազգականները հարսնացուին և հարսնացուի ազգականները փեսայացուին դրամական նուէր են տալիս, որ կոչւում է «երեստեսնուկ», հարսանիքի ժամանակ սաշուին նոյնպէս դրամական նուէր են տալիս: Ննջեցեալի տունը կերակրներ են ուղարկում, սուրբ խաչին ուլ և օւ եաղմա նուիրում: Պանդխտութեան գնացողին թխուածք են ուղարկում, վերջինս էլ վերադառնալիս՝ մի-որեւէ ընծայ է բերում:

Գիւղերում անուանակոչութիւնը և կամ ծննդեան տօնը տօնելու և այս առթիւ ընծաներ տալու սովորութիւնը չկայ, միայն մի քանի աւաններում և քաղաքներում իբր նորամուտ սովորութիւն՝ կատարում է՝ բարեկամները խմորեղէններ, մրգեր, խմիչք են տանում և հիւրասիրում են ընթրիկով: Հին նախնականում անուանակոչութիւնը տօնում են հշթէ՝ տօնի օրը, այլ նրա նախընթաց երեկոյին:

ԻԹ. — Այսպէս ուրեմն, ընծաները, որ նախնական մարդը կամաւոր կերպով մատուցել է նրան, որի բարեհաճութիւնը կամեցել է գրաւել, ժամանակի ընթացքում, հասարակութեան զարգացմամբ շատ սովորութիւնների աղբիւր են դարձել:

Քաղաքական պետին, սրա շխտանութեան զարգացման համեմատ, ընծաներ մատուցանելու շարժառիթը կազմում է նրա ազդած երկիւղը և մասամբ նրա օգնութեան դիմելու ցանկութիւնը: Այս ընծաները, որ սկզբում բարիհաճութիւն են գրաւել իրենց ներքին արժէքի շնորհիւ, յետոյ նոյնն անում են դառնալով հաւատարմութեան և անձնութեան արտայայտչներ: Վերջին տեսակի ընծաներից յառաջանում է ընծայաբերութեան ծէս, իսկ առաջին տեսակից՝ սկզբում ծագում է ընծայաբերութիւն իբր հարկ և ապա իբր տուրք: Սրա հետ միաժամանակ ննջեցեալի գերեզմանի վրայ, նրա ողու բարեհաճութիւնը հայցելու յուսով, զանազան կերակրներ գնելու սովորութիւնը հետզհետէ զարգանալով աւելի առատ և յաճախ կրկնւում է նշանաւոր անձերի գերեզմանների վրայ և ի վերջոյ դառնում զոհաբերութիւն տաճարների սեղանների վրայ աստուածներին: Միս, խմիչք կամ հանդերձ ընծայաբերելը, որ սկզբում

գթարար են համարուում այն պատճառով, որ իսկապէս օգուտ են բերում ոգուն կամ աստծուն, յետոյ ծառայում են իբրև հպատակութիւն արտայայտողներ: Այս տեղից ընծայարեութիւնը դառնում է յարգանք արտայայտող գործողութիւն, միանգամայն անկախ ընծայի ներքին արժէքից, մինչ զեռ այս արժէքը, ապրուստի միջոց հայթայթելով քահանաներին, կարելի է դարձնում միջնորդների գոյութիւնը, որոնց միջոցով կատարուում է աստուածութեան պաշտամունքը. գոհաբերութիւնները սկիզբն են տալիս եկեղեցական եկամուտներին:

Այսպէս ուրեմն, մենք մի նոր ապացոյց ևս ունեցանք, որ ծիսական կարգերը նախընթաց են քաղաքական և եկեղեցական կարգերին, որովհետև վերոյիշեալից երևում է, որ առաջին, ծիսական կարգից ծագող գործողութիւններից կազմակերպուում են հիմունքներ, որոնց շնորհիւ պահպանուում են միւսները:

Եթէ այժմ մենք դիտենք, թէ ինչ յարաբերութիւն է տիրում ընծաներ մատուցանելու գործողութեան և հասարակական զանազան տիպերի մէջ, կը նկատենք, նախ, որ այս գործողութիւնը մի մեծ դեր չի խաղում պարզ հասարակութիւնների մէջ, ուր պետի իշխանութիւնը կամ դեռ ևս բոլորովին չէ հաստատուել և կամ դեռ չէ ամրապնդուել: Ընդհակառակը, բաղադրուած կամ կրկնակի բաղադրուած հասարակութիւնների մէջ, այս սովորութիւնը սաստիկ տիրապետում է, ինչպէս Աֆրիկայի, Պօլինեզիայի, հին Ամերիկայի կիսակիրթ ժողովուրդների մէջ, ուր թէ գլխաւոր և թէ երկրորդական պետերի իշխանութեան ամրապնդումը առիթ և միևնոյն ժամանակ շարժառիթ է ծառայում ընծաներ մատուցանելու սովորութեան: Ընդունելով այս ճշմարտութիւնը, մենք պարտաւոր ենք ընդունելու նաև հետևեալ, աւելի նշանաւոր սկզբունքը, որ ընծաներ մատուցանելու սովորութիւնը հակադարձ յարաբերական է պարզ կամ բարդ հասարակական կազմակերպութեան տիպի հետ, մինչ զեռ ուղղակի յարաբերական է հասարակութեան զօրեղ կամ նուազ զինւորական կազմակերպութեան: Մէկի բարեհաճութիւնը զրաւելու ցանկութիւնը այնքան աւելի զօրեղ է լինում, որքան այս անձը երկիւղ է ներշնչում, և սրա շնորհիւ, յաղթանակող զօրապետը, և մանաւանդ թագաւորը, ինքը, գէնքի զօրութիւնով ստորադրելով իրեն շատ զօրապետներ, այնպիսի մի անձնաւորութիւն է հանդիսանում, որ շատ ցանկալի է համարուում նրա ազահութեանը գոհացում տուող և միաժամանակ հպատակութիւն արտայայտող գործողութիւնով նրա բարեհաճութիւնը զրաւելլ: Այստեղից՝ պետերին ընծաներ մատուցանելու սովորութիւնը ամենից աւելի տիրում է

նոյն իսկ այժմ էլ այն հասարակութիւնների մէջ, ուր տիրում է զինուորական ուղին և կամ ուր անցեալում նոյն զինուորական ուժերի տիրապետութեամբ յառաջ է եկել բռնակալ միապետութիւն, որ յատուկ է սրան: Այս տեղից է որ ամբողջ Արեւելքում, ուր ամեն տեղ տիրում է այս հասարակական տիպը, իշխանութիւնը իրենց ձեռքում ամփոփող անձերին ընծաներ մատուցանելը պարտադիր է համարւում: Այստեղից է նաև, որ Եւրոպայի նախնական պատմութեան ընթացքում, երբ հասարակական գործունէութիւնը պատերազմական էր, և կառավարւում էր զինուորական կազմակերպութեամբ, թագաւորին թէ անհատապէս և թէ խմբովին ընծաներ մատուցանելու սովորութիւնը խիստ ընդհանրացած էր, իբր արտայայտութիւն իրենց անձնուիրութեան. իսկ բարձր անձերը առատ պարգևներ էին տալիս իրենց ստորարբերակներին— իբր ապացոյց նրանց ստորադրութեան, որ միանգամայն համապատասխանում է զինուորական ոգուն:

Միևնոյն առնչութիւնը ներկայացնում է նաև աստուածներին ընծաներ մատուցանելու սովորութիւնը: Նոր-Աշխարհի անհետացող զինուորական պետութիւնների մէջ աստուածներին շարունակ ընծաներ էին մատուցանում, և նրանց տաճարների սեղանները չէին զտարւում ընդունելու միշտ նոր ու նոր թանգազին ընծաներ: Արեւելքի հին ազգերի ձեռագիրները, որմիանկարները, և քանդակները ցոյց են տալիս, որ այս ժողովուրդների մէջ, որոնց հասարակական կազմակերպութիւնն ու գործունէութիւնը միանգամայն զինուորական է եղել, աստուածներին ընծայաբերութիւն կատարւում էր անդադրում, և ահազին ծաւալով և որ նրանց պաշտաման տեղերի փառայեղութեան համար ահազին հարստութիւն է ծախսուած: Միևնոյն կերպ և՛ Եւրոպայում աստածուն և եկեղեցուն մատուցուած ընծաներն աւելի շատ և ծանրագին են եղել սկզբնական զինուորական ժամանակներում, քան աւելի ուշ արդիւնաբերական շրջանում: Ուշադրաւ է նաև այն, որ նոյնիսկ այժմ, նախնական գոհաբերութեան այն տեսակը, որ յարատեւ է մինչև այժմ պատարագի և հաղորդութեան, հացի և գինու սովորութեան մէջ (որ մատուցւում է Աստծուն նախքան հաղորդողների ճաշակելը), աւելի նուազ կրկնւում է Անգղիայում, քան կաթոլիկական հասարակութիւնների մէջ, որ իրենց հասարակական կազմակերպութեամբ աւելի զինուորական են: Իսկ խնկարկումը, որ կազմում է նախնական շատ ազգերի գոհաբերութիւններից մինը, գործադրւում է կաթոլիկական աստուածապաշտութեան մէջ, մինչև դեռ անդդիականից արդէն վաղուց ան-

հետացել է։ Մինչև անգամ անգղիական հասարակութեան մէջ գտնուում ենք այսպիսի հակադրութիւնների հետքեր։ Խիբապետող եկեղեցու մէջ, որ մասն է կազմում վարչական կազմակերպութեան, որի զարգացումը կատարուել է դինուորական ռէժիմի ազդեցութեամբ, զոհաբերութեան ծէսերը դեռևս շարունակում են գոյութիւն ունենալ, մինչև դեռ, կվակերների մօտ, որ հակա—եկեղեցական մի ազանդ է, դրանք չեն կատարուում։ Դիսսիդենտները, հակադինուորական կազմակերպութեան այս ներկայացուցիչները, որ նոյն իսկ մի կարգաւորուած հոգևորականութիւն չունին և աչքի են ընկնում դեմոկրատական կառավարութեամբ, ներկայանում են որպէս ինդիւստրիալիզմին յատուկ կազմակերպութեան տիպար։ Այս միևնոյնը կարելի է ասել նաև այն ընծաների վերաբերմամբ, որ մատուցում են հասարակական յարաբերութիւնների բարելաւման նպատակով։ Այս հեշտութեամբ կարելի է նկատել, համեմատելով միմեանց հետ Եւրոպայի ազգերը, որքան և հաւասար լինին սրանք իրենց քաղաքակրթութեան աստիճանով, այնուամենայնիւ տարբերում են այն պատուարի ուժով, որ ինդիւստրիալիզմը դրել է միլիտարիզմի դէմ։ Գերմանիայում, ուր ազգականներին և բարեկամներին պարբերաբար ընծաներ մատուցանելը ընդհանրացած պարտաւորութիւն է համարւում, և Զերանսիայում, ուր այդ միևնոյն սովորութեան պատճառած բեռը այն աստիճան ծանր է, որ յաճախ նոր տարուն և զատկին շատերը հեռանում են տնից, որպէս զի խոյս տան այդ ընծաներից, այս հասարակական ծէսը այստեղ տիրում է շատ աւելի մեծ ուժով քան Անգղիայում, որի կազմակերպութիւնը աւելի պակաս դինուորական է։

